

2018



THE WORLD BANK



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏՆՈՒՄԻ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԻ
ՆԵՐՎՈՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

ՀԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ
ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ 2018 թ. ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ
հիմնական արդյունքները և որոշ համեմատականներ 2016թ. և 2013թ.
հարցումների արդյունքների հետ

ՀՌԿԿ-Հայաստան
դեկտեմբեր, 2018

Զեկույցի մասին

Սույն զեկույցը ներկայացնում է հարկային վարչարարության նկատմամբ հարկ վճարողների ընկալման և վերաբերմունքի մասին՝ Հայաստանում գործող կազմակերպություններում ու անհատ ձեռնարկատերերի շրջանում 2018թ. հոկտեմբեր-նոյեմբերին անցկացված ընտրանքային հետազոտության հիմնական արդյունքները: Հարցումը ցույց է տվել, որ հարկ վճարողների վերաբերմունքը հարկային վարչարարության և օրինապահության նկատմամբ վերջին՝ հատկապես երկու-երեք տարիներին, հիմնականում դրական փոփոխություն է կրել:

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Այս հետազոտությունն իրականացվել է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) պատվերով՝ Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի (ՀՎԱԾ) շրջանակներում:

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամը իր երախտագիտությունն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել սույն զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես, շնորհակալություն ենք հայտնում.

- ՀՎԱԾ համակարգող Անահիտ Բասենցյանին հետազոտության ընթացքում ցուցաբերած շարունակական աջակցության և կազմակերպչական ներդրման համար,
- ՊԵԿ Հարկային կարգապահության ծրագրերի բաժնի ղեկավար Հրայր Մկրտչյանին, Հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության բաժնի ղեկավար Մարիամ Մանուկյանին, ինչպես նաև ՊԵԿ անձնակազմի այլ անդամներին հարցաթերթը մշակելիս մասնագիտական խորհրդատվության ու զեկույցի ուղղորդման համար,
- Հարցմանը մասնակցած բոլոր հարկատուներին և հարցումն իրականացրած հարցազրուցավարներին՝ համագործակցության համար:

Ձեկույցի պատրաստման պատասխանատուներն են.

- Ահարոն Զիլինգարյանը, որը պատրաստել է վերլուծական զեկույցը և նպաստել հետազոտական գործիքների և նախագծի մշակմանը,
- Հեղինե Մանասյանը, որը ղեկավարել է հետազոտական թիմը և կոորդինացրել է հետազոտական աշխատանքները,
- Էլլա Կարագուլյանը, որը համակարգել է ընտրանքի, տվյալների հավաքագրման և մշակման աշխատանքները,

Հետազոտական աշխատանքներին ու զեկույցի պատրաստմանը իրենց ավանդն են բերել ՀՌԿԿ-Հայաստանի թիմի անդամներ Սոնա Բալասանյանը, Մարիամ Առաքելյանը, Մարիամ Եվդոկիմովան, ինչպես նաև կրտսեր դրամաշնորհառուները և կամավորները:

Ձեկույցն անգլերեն է թարգմանել Արփինե Փոքսուղյանը:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
ԱԺ	Ազգային ժողով
ԱԶ	Անհատ ձեռնարկատեր
ԳՀՎ	Գործարար հարկ վճարող
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվամիջոցներ
ԶՎ	Զրուցավար
Հ	Հավելված
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԴՄ	Հսկիչ-դրամարկղային մեքենա
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
ՀՎԱԾ	Հարկային վարչարարության արդիականացման ծրագիր
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՊ	Հրաժարվում եմ պատասխանել
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏ	Տնային տնտեսություն
ՉԳ	Չգիտեմ
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ.....	2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	3
ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ	5
ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.....	7
ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	7
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	12
ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ.....	14
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏՈՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՅԼ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ	17
ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ	23
ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.....	32
ԲԻԶՆԵՍՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԵՌՆԱՆԿԱՐՆԵՐ	60
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	64
Հավելված 1. Հարկային վարչարարություն և հարկային ընկալումների մասին հարկատուների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթը	66
Հավելված 2. Պարզ հաճախությունների աղյուսակները.....	88
Հավելված 3. Որոշ համեմատական աղյուսակներ.....	118
Հավելված 4. Որոշ խաչաձև աղյուսակներ	121
Հավելված 5. Հարկային վարչարարության վերաբերյալ պարբերական հարցումների համառոտ հարցաթերթ.....	143

Դավիթ Անանյան

Հայաստանի Հանրապետության Պետական եկամուտների կոմիտեի նախագահ

Պետական եկամուտների կոմիտեն շարունակաբար աշխատում է հարկային վարչարարության արդիականացման և հարկատուներին մատուցվող ծառայությունները բարելավելու ուղղությամբ: Ներկայումս, հարկային մարմնի առաջնահերթություններից է հարկատուների հարկային պարտավորությունների կատարման նվազագույն վարչական ծախսերով ուղեկցվող հարկերի հավաքագրման օպտիմալացումը:

Այս գործընթացում կարևոր է պարբերաբար անդրադառնալ հարկային վարչարարության վերաբերյալ հարկ վճարողների ընկալումներին և գնահատել եկամուտների կառավարման զարգացումները: Հարկ վճարողների տեսակետների ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտել նրանց առջև ծառայող ամենատարածված մարտահրավերները և հնարավոր անհարմարությունները, և հարկային վարչարարության զարգացման ռազմավարությունը ձևավորելիս, համապատասխանաբար անդրադառնալ այդ հարցերին:

Պետական եկամուտների կոմիտեն արժևորում է «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստանի» պատրաստած զեկույցը: Զեկույցի արդյունքները ցույց են տալիս, որ հարկատուների մեծ մասի մոտ աճել է դրական վերաբերմունքը հարկային վարչարարության և հարկային մարմնի նկատմամբ: Միաժամանակ, Պետական եկամուտների կոմիտեն կարևորում է հարկ վճարողներից ստացված բոլոր կարծիքները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս առաջիկա քաղաքականությունը մշակելիս արձագանքելու հարկ վճարողների բարձրացրած խնդիրներին:

Մենք հավատացած ենք, որ հետազոտական այս նախաձեռնությունը պետական և մասնավոր հատվածների միջև երկխոսությունն ակտիվացնելու կարևոր քայլ է:

Դոկտոր Միգարա Օ.Դե Միլվա

Ավագ տնտեսագետ, Կառավարման համաշխարհային կիրարկում, ՀԲ խումբ

Նախևառաջ, շնորհակալությունս եմ հայտնում այս ընդգրկուն հետամուտ հետազոտությունն իրականացրած թիմին: ՊԵԿ ղեկավարության հետ քննարկումների արդյունքում մենք հավաստիացել ենք, որ այսպիսի ուսումնասիրությունների պարբերական անցկացումը կնպաստի հարկային վարչարարության հնարավոր բացթողումների բացահայտմանը և ոլորտում բարեփոխումների շարունակականության ապահովմանն ու Հայաստանում հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Հարկ վճարողների կարծիքը պարբերաբար քննության առնելն ու նրանց հետ անընդմեջ կապի մեջ գտնվելն արդյունավետության և թափանցիկության բարձրացման հենասյուներ են համարվում հարկային առաջադեմ բոլոր վարչարարությունների համար: Ուստի ուրախ եմ, որ ՊԵԿ-ը մտադիր է սույն մոտեցումը դարձնել Հայաստանի հարկային վարչարարության անբաժանելի մաս:

ՀՎԱԾ-ը կյանքի կոչեց հարկային վարչարարության արդիականացմանն ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների մի շարք կարևոր բարդ և ինտեգրված փաթեթներ: Թույլ տվեք մատնանշել ծրագրի մի քանի առանցքային նվաճումներ.

- ՀՎԱԾ-ը ներդրեց հարկերի վճարման պարզեցված ընթացակարգեր, մասնավորապես հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ, և ընդլայնեց հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների շրջանակը, դրանով իսկ վերացնելով նրանց հարկային պարտավորությունների կատարման խոչընդոտները: Այսպես, եթե 2011 թվականին հարկերի էլեկտրոնային հայտարարագրումից օգտվողների բաժինը կազմում էր 20%, ապա այսօր այն արդեն հասել է գրեթե 98%-ի՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության անդամ երկրներից շատերի մակարդակին: Հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները նշանակալիորեն բարելավվել են նաև հեռախոսազանգերի սպասարկման կենտրոն հիմնելու և այլ ներքին բարեփոխումների շնորհիվ:
- ՀՎԱԾ-ի շրջանակում իրականացվել է տեղեկատվական տեխնոլոգիական հիմնական համակարգերի արդիականացումը՝ ներառյալ սլոյալադարանների միասնականացումը, սլոյալների կենտրոնացված մշակումը, պահուստային պատճենավորումը (տեղեկատվական վթարների կառավարումը) և սլոյալների փոխանակումը երրորդ կողմերի, օրինակ, Կադաստրի, Ոստիկանության և Կենտրոնական բանկի հետ:
- Ծրագիրը ստեղծեց նաև հարկային խախտումների ռիսկայնության ցուցանիշների գնահատման վրա հիմնվող հարկային ստուգումների և ուսումնասիրությունների ժամանակակից (թվայնացված) համակարգ, որի նպատակը հարկային պարտավորությունների կատարման օրինապահությունը բարելավելն ու հասցեական մեխանիզմների արմատավորելն է: Այս բարեփոխումը զգալիորեն նվազեցնում է կամայականության հնարավորությունները, դրանով իսկ բարձրացնելով հարկային վարչարարության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:
- Աջակցություն ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնին, սլոյալների արդի շտեմարանի ստեղծում՝ մեծ թվով գերժամանակակից սերվերներով, SS այլ աջակցություն, աղետների կառավարման կենտրոնի հիմնում Դիլիջանում, ինչպես նաև մի քանի ուսուցողական այցեր՝ աջակցելու ՊԵԿ SS մասնագետներին միջազգային լավագույն փորձի վրա հիմնված կարևոր ծրագրային փաթեթներ նախագծելու նպատակով:

Համաշխարհային բանկը հայտնում է ՊԵԿ-ին աջակցելու իր հետագա պատրաստակամությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

ՀԱՐԿԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆԿՐԱՆՔԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ 2018Թ.

Սույն զեկույցը ներկայացնում է հարկային վարչարարության նկատմամբ հարկատուների ընկալման և վերաբերմունքի մասին Հայաստանում գործող կազմակերպություններում ու անհատ ձեռնարկատերերի շրջանում 2018թ. հոկտեմբեր-նոյեմբերին անցկացված ընտրանքային հետազոտության հիմնական արդյունքները:

Համանման հետազոտություններ իրականացվել են նաև 2013 թվականին և 2016 թվականին և որոշ դիտարկումներ ներկայացված են [այդ հետազոտությունների](#) արդյունքների համեմատ:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հարցումը ցույց տվեց, որ հարկատուների վերաբերմունքը հարկային վարչարարության և օրինապահության նկատմամբ վերջին տարիներին, հատկապես վերջին երկու-երեք տարիների ընթացքում, հիմնականում դրական փոփոխություն է կրել: Բացառիկ են այն ցուցանիշները, որոնց գծով արձանագրվել է հարկ վճարողների կարծիքների կամ հարկային վարչարարական հիմնական գործառնությունների վատթարացում:

Հիմնական արդյունքները հետևյալն են՝

Հարկային օրինապահության ընկալման առումով.

1. Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից հարկային վարչարարության վերափոխումներում գործարարներն առանցքային են համարել հարկատուներին սպասարկելու ծառայությունների ընդլայնումը: Ընդ որում, հարկային սկզբունքային հարցերի քննարկման և լուծումներ տալու կորպորատիվ մակարդակի աճին զուգընթաց մեծանում է համագործակցության և հարկային մարմնի կողմից սպասարկման ծառայությունները ողջունելու աստիճանը:
2. Հարկ վճարողների մոտ կեսը չգիտեն, թե արդյոք մասնագիտացված կառույցները կամ ոլորտային միություններն ու ասոցիացիաները կարող են ազդել հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության բարելավման վրա:
3. Գործարար հարկ վճարողների համար նոր իրողություն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» գործունեությունը:
4. «Ձեր գնահատմամբ որքա՞ն է կազմում ամբողջ տնտեսական գործունեության ստվերային (հարկային մարմիններին չհայտարարագրված) շրջանառության բաժինը» հարցի պատասխաններից բխում է միջին ցուցանիշ՝ 16,2 տոկոս: Ընդ որում, հարկային մարմիններին չհայտարարագրած շրջանառության «զգայուն» հարցի պատասխանները

համադրելի են ծախսերի չփաստաթղթավորման հարցի պատասխաններին: Առանց փաստաթղթավորման գնումների բաժնի միջին գնահատականը բոլոր գնումներում կազմել է 12,7 տոկոս:

Ստվերային տնտեսության կրճատման ցանկությունը զարմանալիորեն միասնական է. սակայն, այդ կապակցությամբ գործարարների հայտնած մտավախությունը ոչ միայն հնարավոր գնաճն է (21 տոկոս), այլ նաև հնարավոր խառնաշփոթը, տնտեսական կապերի ընդհատումը և «հասարակության մեջ հակադրությունների» առաջացումը (23,6 տոկոս):

5. Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ դառնալուց հետո գործարարների մոտ մաքսային վարչարարության նկատմամբ ավելի «բարեհաճ» ընկալումներ են ձևավորվել:
6. Հարկային օրենսգրքի ինստիտուտը գնալով «իր տեղը գտնում է» հարկ վճարողների ընկալումների մեջ: Համարվում է, որ այն նպաստում է օրենսդրության մատչելիությանը:
7. Հարկատուների շրջանում մեծացել է հարկային օրինապահության՝ «վախով» պայմանավորված մասը՝ 2018թ. այն կազմել է 65 տոկոս՝ 2013 թ. 53,3 տոկոսի դիմաց:
8. Գործարարները պատրաստ են ավելի օրինապահ լինել, սակայն նրանց 13,3 տոկոսը կարծում է, որ «կողքինները» չեն գնահատի, և 19,5 տոկոսն էլ կարծում է, որ «հարկայինը» չի գնահատի:

Հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների նկատմամբ վերաբերմունքի առումով.

1. Գրեթե բոլոր գործարար հարկատուները հատկապես օգտակար են համարել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը (հարցվածների 98,1 տոկոսը) և էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգը (հարցվածների 96 տոկոսը): Նշենք, որ այդ համակարգերը օգտակար և շատ օգտակար էին համարել 2013թ. հարցվածների անհամեմատ ավելի սակավ մասը՝ 75,3 և 58 տոկոսը, համապատասխանաբար:
2. «Օրինապահ հարկ վճարողների գրանցման համակարգը» որպես ծառայության տեսակ օգտակար և շատ օգտակար են համարել 2018թ. հարցվածների 71,8 տոկոսը (2013թ. հարցվածների 58,8 տոկոսի դիմաց), իսկ «հարկային օրացույց»-ը և «ՀՀ հարկ վճարողների որոնման համակարգ»-ը՝ 79,8 և 86,8 տոկոսը, համապատասխանաբար (2013թ. հարցվածների 66,8 և 55,8 տոկոսի դիմաց): Միաժամանակ, հստակ չեն ընկալվում տարբերությունները «առցանց ծանուցման համակարգ», «առցանց նամակագրության համակարգ» և «էլեկտրոնային փոստային առաքման համակարգ» անվանումներով ծառայությունների միջև:
3. Վերջին երեք տարիների ընթացքում հարկային վարչարարության գործառնությունների ավտոմատացումը, հարցվածների 63 տոկոսի կարծիքով հանգեցրել է **բիզնեսի ծախսերի կրճատման**. ԱՁ-ների դեպքում այդ կարծիքը կիսում են միայն 45,7 տոկոսը:
4. Երեք նոր տեսակի առցանց ծառայությունների վերաբերյալ հարցերից պարզվում է, որ թեև գործարարները տեղյակ են միասնական հաշվի կիրառման և մյուս երկու առցանց ծառայությունների մասին, սակայն առայժմ վերապահումով են մոտենում դրանց՝ բիզնես գործընթացների պարզեցման վրա ազդելուն: Խոսքը, հատկապես,

վերաբերում է միասնական հաշվին: Միասնական գանձապետական հաշվի մասին առավել հայտնի է 24/7 ռեժիմով հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

5. Հարցվածների զգալի մասը վստահ չէ, որ հարկային հարցերով պաշտոնական պարզաբանումներ տալու իրավասությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը փոխանցելը (2018թ. հուլիսի 1-ից) նպաստելու է հարկային վարչարարական գործառնությունների ավելի հստակ կատարմանը, ՊԵԿ-ի՝ սեփական գործառնությունների վրա կենտրոնանալուն: Այդ գործառնությունը, թերևս, կարիք ուներ ավելի լայն մեկնաբանման և հիմնավորման:
6. Լուրջ նախապատրաստման և պարզաբանման կարիք ունի հորիզոնական մոնիթորինգի համակարգը:
7. ՊԵԿ ուսումնական կենտրոնի առաջարկած ծրագրերը արդիական են համարել, իսկ սեմինարների մասին իրազեկումը արդյունավետ, ու դասընթացավարների պրոֆեսիոնալիզմը և դասերի որակը բարձր են գնահատել կենտրոնի մասին տեղեկացվածների 84.1, 84.4 և 78.6 տոկոսը, համապատասխանաբար: Միաժամանակ, կենտրոնի մասին կարծիք հայտնաձևների 34.4 տոկոսը համամիտ չէ այն տեսակետին, որ ուսումնական կենտրոնի առաջարկած դասընթացներն ավելի օգտակար և արդյունավետ են, քան մասնավոր սեկտորում նման ծառայություններ մատուցողներին:
8. Հեռախոսագանգերի կենտրոնի (թեժ գծի) աշխատանքները օգտակար և շատ օգտակար են համարել հարցվածների ծանրակշիռ մասը (81.8 տոկոսը): Կենտրոնի ծառայությունների որակից ակնհայտ գոհունակություն են հայտնել հարցվածների 63.7 տոկոսը, մինչդեռ արագ արձագանքման տեսանկյունից դրանք մատչելի են համարել հարցված գործարար հարկատուների միայն 41,5 տոկոսը:
9. Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների աշխատանքի վերաբերյալ ընկալումը և գնահատականները շատ բարձր են, միաժամանակ դրանց տեխնիկական ապահովվածության հարցում կան վերապահումներ:
10. Հարցմամբ բացահայտվել է հետաքրքիր տեղաշարժ հարկային կանոնակարգերում փոփոխությունների մասին տեղեկատվության ստացման ցանկալի աղբյուրը դարձել են անմիջականորեն հարկային մարմինները:
11. Հարկային մարմնի ծառայությունների տեսականու առումով գործարարները նոր ծառայությունների պահանջ չեն դնում, դրա փոխարեն ակնկալելով հարկային մարմնից հարկ վճարողներին ուղարկվող տեղեկատվության օպերատիվության և որակի աճ: Նոր ծառայություններից նշվում է միայն ժամանակակից տեխնոլոգիական գործիքների (օրինակ, բջջային հեռախոսների համար հատուկ հարկային հավելվածի, ինչպես նաև պարզաբանումների պորտալի) արմատավորումը և հետագա կիրառումը:
12. Հարկային վարչարարության միջոցառումների՝ անցած տարիներին ազդեցության իմաստով առանձին ցուցանիշներ.
 - ✓ վերլուծությունը վկայում է ժամանակակից թվային տեխնոլոգիաների հիմքի վրա զանազան ծառայությունների, հատկապես առցանց ծանուցման և էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգերի, օգտակարության գնահատականի էական աճը: Նշված ծառայությունների օգտակարության միջին գնահատականը 2013-2018թթ. ավելացել է մոտ 26 տոկոսային կետով՝ գրեթե հավասարաչափ ըստ ժամանակային հատվածների:

- ✓ «Ինչպե՞ս եք գնահատում հարկային օրենսդրության և վարչարարության բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից վերջին մի քանի տարիներին իրականացվող միջոցառումների ազդեցությունը բիզնես-գործունեության և բիզնես միջավայրի վրա» հարցի պատասխանների դիտարկումը և 2018թ. հարցումների արդյունքների համադրումը 2016թ. և 2013թ. տվյալների հետ ցույց է տալիս, որ հարկային վարչարարության բարելավման միջոցառումների առնչությամբ դրական գնահատականների բաժինն էապես ավելացել է՝ 21 տոկոսից հասնելով 62,5 տոկոսի: Այդուհանդերձ, այդ տարիներին հարցվածների մի հաստատուն հատված՝ մոտ մեկ երրորդը դրանք բավարար է համարել:

Հարկատուների վրա ներգործության միջոցների կիրառման առումով.

1. Հարկային ստուգումների հարցում գործարարները չեն նշել իրենց համար որևէ անակնկալի մասին. ստուգումների ժամանակ իրենց անհամաձայնությունն են արտահայտել գործարար հարկ վճարողների միայն 23,5 տոկոսը: Դատարան գնացել է գործարարների միայն 18,1 տոկոսը: Ստուգման ակտի բողոքարկման արդյունքներից սպասելիքները դեռևս մեծ են. դրանցից բավարարված են եղել 21,3 տոկոսը:
2. Մոնիթորինգի կենտրոնի բացահայտվող և գործարարներին ուղարկվող՝ ռիսկերի վերաբերյալ ծանուցումների ինստիտուտը կայացման փուլում է, որոշ դեպքերում դեռևս «գերազնահատում է» իրական հատվածի ռիսկերը, սակայն ընդհանուր առմամբ ողջունվում է:
3. Կամերալ ուսումնասիրությունների արձանագրություններում բերված վերլուծություններն արդեն իրենց կայուն և գնահատելի տեղն են գտել հարկային վարչարարներ-գործարար հարկ վճարողներ հարթակում:
4. Հարկերի հավաքագրման գործառույթների կապակցությամբ գործարար հարկ վճարողները դեռևս միայն կիսով չափ են վստահ, որ հարկային մարմինը արդար ու հավասար վերաբերունք է կիրառում բոլորի նկատմամբ: Այս ցուցանիշը բարելավման ռեզերվ ունի, հատկապես մարզերում:

Բիզնեսում հարկային գործառույթների կազմակերպման առումով.

1. Գործարար հարկ վճարողները դեռևս հակված են հաշվապահական հաշվառման և ֆինանսասական ու հարկային հաշվետվությունների պատրաստման գործառույթը չպատվիրակել արտաքին կատարողների. պատվիրակման պրակտիկայի մասին են հայտնել հարցվածների միայն 18 տոկոսը: Այն ցածր է մարզերում և բարձր է «Երիտասարդ գործարար միավորների (6 տարուց պակաս փաստացի գործող բիզնեսների)» մոտ՝ 21,7 տոկոս:
2. Խորհրդատվական ծառայություններից օգտվելը ևս նորմա չէ. գործարար հարկատուների մեծ մասը «ունիվերսալ» են և զիտեն ինչպես անել ամեն ինչ: Համեմատաբար պահանջարկված են (10 տոկոս) իրավաբանական ծառայությունները, իսկ հարկային հարցերով խորհրդատուների օժանդակությանն են դիմում հարցվածների միայն 8 տոկոսը:

3. Խիստ ցածր է հաշվապահական և հարկային թեմաներով վերապատրաստումների բյուջեն. գործարարների 80,8 տոկոսը հարկային և հաշվապահական թեմաներով վերապատրաստումների համար որևէ գումար չի հատկացնում:
4. Շատ լավատեսական են եղել գործարարների՝ ընթացիկ տարվա և հետագա երեք տարիների ֆինանսական արդյունքների սպասվելիք և կանխատեսվող ցուցանիշները. միայն 7,6 տոկոսն են կանխատեսել կորուստներ: Նման լավատեսությունը կարևոր գործոն է, բարենպաստ՝ ստեղծագործ մոտեցումների համար: Միաժամանակ, ցանկալի և կարևոր է, որ այն հիմնված լինի տեղեկացվածության վրա, այլ ոչ թե ժամանակի որոշակի հատվածում ժողովրդական պաթոսի վրա:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին հինգ տարիներին Հայաստանի Հանրապետության հարկային համակարգում էական փոփոխություններ են տեղի ունեցել: Առավել մեծ փոփոխությունը 2016թ. հոկտեմբերին հարկային օրենսգրքի ընդունումն էր, որն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ից: 2018թ. հուլիսի 1-ից հարկային և մաքսային հարցերով պաշտոնական պարզաբանումների իրավասությունը և պարտավորությունը հարկային մարմնից՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից (ՊԵԿ) փոխանցվեց ՀՀ հարկային քաղաքականություն մշակող մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը: Հայաստանում հարկային և մաքսային ծառայությունները ներկայումս տրամադրվում են մեկ գերատեսչության՝ ՀՀ ՊԵԿ կողմից: Հայաստանը 2015 թվականից անդամակցում է ռեգիոնալ մեծ տնտեսական միությանը՝ ԵԱՏՄ-ին, որի շրջանակում իրականացվում են մաքսային և անուղղակի հարկերի ոլորտում միասնական քաղաքականություն և վարչարարություն: Հայաստանը ստորագրել է մի քանի միջազգային համաձայնագրեր, այդ թվում՝ ՏՀԶԿ շրջանակներում, որոնք վերաբերում են տվյալների ավտոմատ փոխանակմանը և այլ հարկային վարչարարական հարցերի: Ըստ ՀԲ-ի Doing Business ծրագրի, վերջին տարիներին Հայաստանում հարկային վարչարարության հարցերին առնչվող բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ են քննարկվել և իրականացվել: Այդ օրենսդրական փոփոխությունները վերաբերում են նաև կորպորատիվ կառավարման համակարգի հետագա ուժեղացմանը, մասնավորապես տնօրենների խորհրդի անկախ անդամների ինստիտուտի դերի մեծացմանը, ներքին աուդիտի հանձնաժողովի պարտադիր ձևավորմանը:

ՀԲ-ը, ՀՀ կառավարության հետ իրականացրած Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի միջոցով օժանդակություն է ցուցաբերում Հայաստանում հարկային մարմնի կարողությունների մեծացմանը և հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների բարելավմանը:

Սույն հետազոտությունը նպատակ է ունեցել պարզաբանել, թե վերը նշված փոփոխությունների ազդեցությամբ ինչպիսին են դարձել գործարարությամբ զբաղվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընկալումները և վերաբերմունքը Հայաստանում հարկային վարչարարական ծառայությունների կազմի, կառուցվածքի ու որակի նկատմամբ: Հետազոտությունն առնչվել է միայն հարկային վարչարարության հարցերին, դրա բոլոր հատվածներում:

- հարկ վճարողների սպասարկման ծառայություններ, հատկապես շեշտադրելով ժամանակակից տեխնոլոգիաներով էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունները;
- հարկերի հավաքագրման, պատասխանատվության միջոցների կիրառման և հարկային հսկողական գործառույթներ;
- հարկային վեճերի պարագայում դրանց բողոքարկման գործընթացներ:

Հարցման ժամանակ հաշվի են առնվել հարցմանը պատասխանողների բաշխվածությունն ըստ հարկային ռեժիմների, բիզնեսի մեծության և այլ անհրաժեշտ գործոնների՝ ապահովելու համար պատասխանների ներկայացուցչականությունը: Հաշվի են առնվել նաև հարկային հարցի հետ առնչվող այլ միջավայրային գործոնները. արտաքին տնտեսական գործունեության հետ կապ ունենալ-չունենալը, հաշվապահական ու հարկային աշխատանքները ինքնուրույն կամ այլ արտաքին անձի միջոցով իրականացնելու հանգամանքը, հարկային մարմնի աշխատանքների վրա հատկապես դրան ոչ բնորոշ հարցերով զբաղվելու ազդեցությունը, բիզնես վարողի ընտրած կազմակերպա-իրավական տեսակի և բաժնետիրական կառուցվածքի հնարավոր ազդեցությունը, օտարերկրյա կապիտալի մասնակցությունը և այլն: Այդպիսի բազմաթիվ հարթություններով տվյալների առկայությունը պայմաններ է ստեղծում այլ նմանատիպ վերլուծություններ իրականացնելու համար, հետազոտողների, պետական մարմինների, մասնագիտական շրջանակի և այլ շահագրգիռ կողմերի համար:

Պետք է նշել, որ հատկապես և գերազանցապես հարկային վարչարարական հարցերին ուղղված լինելու շնորհիվ հնարավոր է եղել հետազոտել վարչարարական համարյա բոլոր գործառույթների (բացի հարկահավաքման դեպքում հարկային ներգործության միջոցների կիրառման) վերաբերյալ հարկ վճարողների վերաբերմունքը: Այդ առումով այս հարցումը առաջինն է իր տեսակի մեջ և միանշանակորեն կարող է նպաստել հարկային գործի արդյունավետության բարձրացմանը:

Հուշագիր 1. գծապատկերների, աղյուսակների և տվյալների մասին.

Բոլոր գծապատկերներում և աղյուսակներում, եթե այլ նշում չկա, բերված են բոլոր վավեր պատասխանները՝ արտահայտված տոկոսներով ամբողջի մեջ: Այն դեպքերում, երբ հարցվածները հնարավորություն են ունեցել տալու մեկից ավելի պատասխան, տոկոսների հանրագումարը տարբերվում է հարյուրից, ինչը հաշվարկի առանձնահատկություն է, ոչ թե թվաբանական սխալ: Վերլուծության մեջ ներկայացված թվերի և գծապատկերներում կամ աղյուսակներում տրված թվերի միջև կարող են լինել աննշան տարբերություններ, ինչը կլորացման հետևանք է: Որոշ դեպքերում, շարադրանքը կամ պատկերներն ավելի հստակ ներկայացնելու նպատակով, փոքրաթեք թվերն անտեսվել են:

Հուշագիր 2. գծապատկերների, աղյուսակների և տվյալների ներկայացման մասին.

Տեքստը պարունակում է հղումներ գծապատկերներին և աղյուսակներին: Այնուամենայնիվ, ընթերցողի տրամադրության տակ կլինեն նաև այլ նյութեր, մասնավորապես խաչաձև և համեմատական աղյուսակներ, որոնք Ձեկույցը չձանրաբեռնելու համար օգտագործված և վերլուծված են, սակայն ներկայացված չեն տեքստում կամ հավելվածներում: Դրանք կարելի է վերցնել ՀՌԿԿ-Հայաստանի գրասենյակից կամ [կայքից](#):

Նմանատիպ հարցումներ ՀՌԿԿ-Հայաստանն իրականացրել է նաև 2013 թվականին և 2016 թվականին: Սույն Վերլուծական զեկույցում համապատասխան դեպքերում բերված են համադրումներ նախորդ վերլուծությունների տվյալների հետ:

ՀԱՐՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԸ

2018թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին իրականացված համահանրապետական հարկ վճարող կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության նպատակն էր հասկանալ, թե ինչպիսին են հարկային վարչարարության ուղղությամբ գործարար հարկ վճարողների ընկալումները: Որոշ դեպքերում հնարավոր է եղել նաև ներկայացնել, թե ինչպես են դրանք փոխվել 2013թ. և 2016թ. հարկային ընկալումների ուսումնասիրությունից հետո:

1. Հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության հիմնական բնութագրերը

- *Տվյալների հավաքագրման եղանակը*՝ դեմ առ դեմ հարցազրույցներ
- *Տվյալների հավաքագրման գործիքները*՝ ստանդարտացված հարցաթերթ և ցուցաբարտեր
- *Հետազոտության թիրախային բազմությունը*՝ հարկ վճարող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր
- *Տարածքային ընդգրկումը*՝ ՀՀ բոլոր մարզերը և Երևան քաղաքը
- *Գլխավոր համակցությունը*՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը:

2. Ընտրանքի մեթոդաբանությունը

Ստորև բերված են հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքի ձևավորման հիմնական սկզբունքները.

- *ոչ համամասնական ստրատիֆիկացված ընտրանք*՝ ըստ հարկ վճարողի իրավական տեսակի (կազմակերպություն, անհատ ձեռնարկատեր) և շրջանառության ծավալի (մինչև 58, 35 մլն դրամ, 58, 35 մլն դրամից մինչև 115 մլն դրամ և 115 մլն դրամից ավելի),
- *յուրաքանչյուր ստրատայում հարկատուների ընտրանք ըստ գլխավոր համակցության մեջ դրանց նշանակալիության (ոչ-համամասնական ընտրանք),*
- *հիմնական ընտրանքի ձևավորում.* յուրաքանչյուր ստրատայում կազմակերպությունների պատահական ընտրություն,
- *մեկ պահուստային ընտրանքի ձևավորում,*
- *ընտրանքի չափը՝ 400 հարկ վճարող կազմակերպություն և անհատ ձեռնարկատեր*
- *հարցվողի ընտրությունը՝ կազմակերպության գործունեության հետ կապված որոշումներ կայացնող անձինք, օր.՝ տնօրեն, գլխավոր հաշվապահ և այլն:*

Հետևյալ չորս (1-4) աղյուսակներում, ինչպես նաև Գծապատկեր 1-ում ամփոփված են հարկ վճարող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքի բնութագրերը, ըստ մարզերի, ըստ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև տարեկան շրջանառության ծավալների:

Աղյուսակ 1. Հարկ վճարողների ընտրանքի կազմը

	Հիմնական ընտրանք	
	2018	2016
Կազմակերպություններ	343	164
Անհատ ձեռնարկատերեր	57	218
Ընդամենը	400	382

Աղյուսակ 2. Ընտրված հարկատու կազմակերպությունների թիվն ըստ մարզերի

Մարզ	Գործարար հարկ վճարողների ընտրանքի բաշխումն ըստ մարզերի		
	2018		2016, թիվը
	Թիվը	Բաժինը, %	
Երևան	210	61.2	105
Արագածոտն	4	1.2	2
Արարատ	34	9.9	1
Արմավիր	31	9.0	6
Գեղարքունիք	14	4.1	2
Լոռի	6	1.7	6
Կոտայք	5	1.5	17
Շիրակ	12	3.5	13
Սյունիք	6	1.7	4
Վայոց Ձոր	3	0.9	3
Տավուշ	18	5.2	5
Ընդամենը	343	100.0	164

Համեմատելով այս աղյուսակում բերվածը պաշտոնական վիճակագրության թվերի հետ («ՀՀ ՎԿ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2018թ») տեսնում ենք, որ Երևանի և այլ մարզերի միջև հարցաթերթին պատասխանածների բաշխումը ներկայացուցչական է գործարար համայնքի կարծիքը արտահայտելու իմաստով: Այսպես.

- Երևանի բաժինը ՀՀ տնտեսական հատվածում, ըստ ոլորտների.
 - Արդյունաբերություն- 40,8%
 - Շինարարություն- 47,9%
 - Մանրածախ առևտուր- 74,1%
 - Ծառայություններ- 80,8%
- Երևանի բաժինը ՀՆԱ-ում - 57,7%

Աղյուսակ 3. Գործարար հարկ վճարողների բաշխումը ըստ տարեկան շրջանառության ծավալի, 2018թ.


Շրջանառությունը, ՀՀ դրամ	Հիմնական ընտրանք 2018թ.
Մինչև 58,35 մլն	79
58,35 մլն- 115 մլն	148
115 մլն-ից բարձր	173
Ընդամենը	400

Աղյուսակ 4. Ընտրանքի կազմը ըստ կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի և տարեկան շրջանառության ծավալի, 2018թ.

Շրջանառությունը	Անհատ ձեռնարկատերեր	Կազմակերպություններ	Ընդամենը
Մինչև 58,35 մլն	19	60	79
58,36 մլն- 115 մլն	30	118	148
115 մլն-ից բարձր	8	165	173
Ընդամենը	57	343	400


Ինչպես երևում է վերոբերյալ աղյուսակից և ստորև գծապատկերից, 58,35-115 մլն դրամի միջակայքում և 115 մլն դրամից բարձր տարեկան շրջանառություն ունեցող հարցված միավորների բաժինն ընտրանքում կազմել է մոտ 80 տոկոս:

Գծապատկեր 1. Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի բաշխումը ըստ տարեկան շրջանառության ծավալների, 2018թ. (%)



Հարցվածների կառուցվածքում գերակշռել են ֆինանսական մասնագիտության պաշտոնատար անձինք և մասնագետներ՝ 54%, մինչդեռ ղեկավարների բաժինը կազմել է 32% (տես Գծապատկեր 2 և աղյուսակ Հ 2.4). շատ դեպքերում հարցաթերթին պատասխանելու համար ղեկավարները հրավիրել են հաշվապահին կամ այլ տեղյակ աշխատակցի:

Գծապատկեր 2. Ո՞րն է Ձեր պաշտոնը տվյալ կառույցում



Հարցմանը մասնակցած գործարարների և/կամ նրանց ներկայացուցիչների կրթական աստիճանը բավականին բարձր է. նրանց մոտ 84 տոկոսը բարձրագույն կրթություն ունի, իսկ 9 տոկոսը՝ միջնակարգ մասնագիտական (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Հարցմանը պատասխանածների բաշխումն ըստ կրթամակարդակի, 2018թ.


Կրթական աստիճանը	Բաժինը, %
Միջնակարգ կրթություն	2.8
Միջնակարգ մասնագիտական կրթություն	9.3
Թերի բարձրագույն կրթություն	2.5
Բարձրագույն կրթություն (բակալավր, մագիստրոս, մասնագետ)	83.8
Հետբուհական գիտական աստիճան	1.8
Ընդամենը	100

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏՈՎ ԿԱՐԵՎՈՐ ԱՅԼ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Հարկային օրակարգը Հայաստանում առայժմ մեծապես որոշում է գործարար հանրությունը: Սահմանադրությունը սահմանել է յուրաքանչյուր անձի կողմից հարկեր վճարելու պարտականությունը, լինի դա ֆիզիկական անձ, թե «կորպորատիվ» միավոր կազմակերպություն: Սահմանադրության 61-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված է հետևյալը. «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»: Գործարար հարկ վճարողներն իրենց ջանքերով և գործով, երկրի զարգացման ընթացքն ապահովելու իմաստով առանցքային դերակատարում ունեն: Սույն հետազոտությամբ 400 գործարարների ներկայացուցչական հարցման տվյալների հիման վրա ստորև ներկայացվել է, թե ինչ է մտածում, ինչպիսին է բիզնես հանրության ընկալումը հարկային վարչարարության մասին, այսինքն հարկերի կիրառման, դրանք վճարելու հեշտության, եղած խնդիրների և դրանց լուծման իրենց պատկերացումների մասին:


Հարցված հարկատուների 56%-ը գործում է ավելի քան 7 տարի (տես Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Ձեր բիզնեսը/կազմակերպությունը քանի՞ տարի է փաստացի (ակտիվ) գործում Հայաստանում:



Հարցված գործարար հարկ վճարողների (ԳՀՎ) 84,2 տոկոսի կազմակերպական կարգավիճակը «պարզ» է՝ ՍՊԸ և անհատ ձեռնարկատեր (տես Գծապատկեր 4): Դրա հիմնական պատճառը, հավանաբար այն է, որ բաժնետիրական ընկերություններից պահանջվում են ավելի շատ հաշվետվություններ (օրինակ, «բաժնետերերի» ռեեստրի վարման և այլ հարցերը), ինչը ՍՊԸ-ների պարագայում այնքան էլ խիստ կարգավորված չէ:


Գծապատկեր 4. Ո՞րն է Ձեր բիզնեսի կազմակերպչաիրավական կարգավիճակը/ձևը



Հաջորդ՝ անհատ ձեռնարկատիրոջ կարգավիճակի տարածված լինելը, թերևս, պայմանավորված է բիզնեսի «քիչ աչքի ընկնելու» ցանկությամբ, այդ թվում և հիմնականում հարկային մարմինների առջև, ինչպես նաև հաշվապահական հաշվառման վարման պահանջի մեղմությամբ, հաշվետվությունների հարցում նկատելիորեն ցածր պահանջներով և «փոքրից ու հեշտից սկսելու» ցանկությամբ¹:

ԳՀՎ-ների «տերերի» մեջ շատ քիչ են օտարերկրյա անձինք (ֆիզիկական անձ և կազմակերպություն), 8 տոկոս (կազմակերպություն «բաժնետեր/մասնակից»՝ 5,5 տոկոս, և ֆիզիկական անձ բաժնետեր/մասնակից՝ 2,5 տոկոս, տես Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Ո՞վ է Ձեր բիզնեսի ամենամեծ բաժնետերը/մասնակիցը



Հայաստանում ավելի տարածված է ֆիզիկական անձանց կողմից կազմակերպության հիմնադրումը, քան թե այլ կազմակերպության կողմից դա անելը կամ հետագայում «դուստր ընկերության» ձևով բերումը: ԳՀՎ կազմակերպությունների հիմնական «գործատերը» (մասնակիցը) 86,3 տոկոսի պարագայում ֆիզիկական անձինք են:

Արտադրական ոլորտներում ներգրավված են ԳՀՎ-ների 49 տոկոսը (Տնտեսական գործունեության դասակարգչի «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում» և «Մշակող արդյունաբերություն» հատվածների հանրագումարը), իսկ 51 տոկոսը գործում է առևտրի և ծառայությունների բնագավառում (տես Գծապատկեր 6):


Գծապատկեր 6. Ո՞րն է Ձեր գործունեության հիմնական ոլորտը




ԳՀՎ-ների մոտ տարածված չեն կորպորատիվ կառավարման համակարգերը (տես Գծապատկերներ 7, 8): Այդ առումով «այդ» պատասխան են տվել հարցվածների ընդամենը 18,3 տոկոսը: Հարցված գործարարների մի փոքր մասը ընդհանրապես չգիտի, թե ինչ է նշանակում «կորպորատիվ կառավարում»-ը: Նրանց ծանոթ չեն նաև լիազորությունների բաշխումը փայտերերի/բաժնետերերի ու կառավարիչների միջև, տնօրենների խորհրդի ու այլ կոլեգիալ կառավարման մարմինների նշանակությունը, հանձնաժողովների ու կոմիտեների, այդ թվում ներքին աուդիտի կոմիտեի դերակատարումը, և այլն:

¹ Պետք է նշել, որ հայաստանյան քաղաքացիական կամ այլ կարգավորող օրենսդրությունը չի պահանջում, որ շրջանառության որոշակի ծավալների պարագայում կամ աշխատողների որոշակի թվից ավելանալու դեպքում գործունեությունն անպայման իրականացվի իրավաբանական անձի կարգավիճակի ներքո, ինչպես դա առկա է որոշ երկրներում:

Գծապատկեր 7. Արդյո՞ք Ձեր կազմակերպությունում գործարկված է կորպորատիվ կառավարման համակարգը



Գծապատկեր 8. Արդյո՞ք Ձեր կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ հիմնական բաժնետերերից/մասնակիցներից է




Հատկանշական է, որ ՀՀ կառավարությունը դեռևս 2010թ. հաստատել է միջազգային չափանիշներով կազմված ու լավ հայերենով շարադրված կորպորատիվ կառավարման կոդեքս ու նաև հորդորել-առաջարկել, որ գործարար համայնքը ևս այն հիմք ընդունի: Հավելենք, որ այլ երկրներում հարկային վարչարարական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն կազմակերպություններում, որտեղ ներդրված են կորպորատիվ կառավարման համակարգեր, հարկային օրինապահությունը, որպես կանոն, ավելի բարձր է: Պետք է նշել, որ այդ իմաստով ԳՀՎ-ի կառուցվածքում նշմարվում է որոշակի բարենպաստ զարգացում², մասնավորապես «գործատիրոջ/փայատերի» ու «կառավարիչի» տարանջատում: Այսպես, միաժամանակ տնօրենի և հիմնական փայատեր լինելու համակցությունը ԳՀՎ կազմակերպությունների ընդհանուր թվում 2018թ. կազմել է 69,3 տոկոս, իսկ արհեստավարժ կառավարիչ ունեցողներինը՝ 29,3 տոկոս:

Հարկային հարցերով որոշումներ կայացնողների շարքում կորպորատիվ համակարգի լոկոմոտիվ հանդիսացող «տնօրենների խորհուրդը» մեծ դերակատարում չունի. Հարցված ԳՀՎ-ների միայն 3,5 տոկոսի դեպքում է, որ հարկային հարցերում որոշում ընդունում է տնօրենների խորհուրդը (տես Գծապատկեր 9): Դեպքերի 21,3 տոկոսի պարագայում այդ հարցով որոշում է կայացնում բաժնետերերը, ընդ որում բաժնետերերի մասով տասից յոթ դեպքում որոշումը

² Հարկային վարչարարներն աշխարհում հավակնում են, որ եթե այդ երկու մակարդակներն իրարից առանձին են, ապա դա հնարավորություն է ստեղծում, այլ հավասար պայմաններում, ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձնել հարկերը օրինական ձևով ու չափով վճարելու հարցը, մյուս կողմից, հարկային մարմնի համար մեկ այլ հնարավորություն է բացվում դրա միջոցով համագործակցական հարաբերություններ ձևավորել ընդհանուր կորպորացիայի հետ:


կայացնում է մեծ բաժնետերերը, ինչը հղի է փոքր բաժնետերերի և ընդհանրապես այլ շահառուների, այդ թվում պետության, շահերի ոչ պատշաճ հաշվի առնելու վտանգով:

Գծապատկեր 9. Ձեր կազմակերպությունում ո՞ր մարմինն է որոշումներ ընդունում հարկային հարցերում




Հարցվածների թվում բավականին մեծ՝ 13,5 տոկոս են կազմել «օրինապահ հարկ վճարող» կոչում ունեցող հարկատուները (տես Գծապատկեր 10): Այս ինստիտուտը թեև որոշակի տարածում ունի, այնուամենայնիվ, ըստ էության բավականին վիճելի ընկալման առարկա է, օրենսդրորեն նկարագրված չէ, և այդ իսկ պատճառով մարդկանց շատ պարզ չեն դրանից բխող առավելությունները և լրացուցիչ պարտավորությունները: Դա այդպես է նաև այն պատճառով, որ այդպիսի կոչում ունեցողները սովորական ձևով հայտնվում են ստուգվողների ցանկում, նրանց անունները կարող են հայտնվել զանգվածային լրատվամիջոցներում որպես հարկերը ոչ պատշաճ վճարողներ:

Գծապատկեր 10. Ձեր կազմակերպությունն ունի՞ ՀՀ ՊԵԿ-ի կողմից շնորհվող «օրինապահ հարկ վճարող»-ի կարգավիճակ



Հայաստանյան գործարար հարկատուն հիմնականում վճարում է ուղղակի հարկեր (տես Գծապատկեր 11):


Գծապատկեր 11. Խնդրում եմ նշեք, թե հետևյալ հարկատեսակներից որն է վճարում Ձեր քիզները



Հարցված հարկատուների 98 տոկոսն առնչվում է եկամտային հարկի հետ, իսկ շահութահարկի հետ՝ 79 տոկոսը: Ընդհանրապես հարցվողների ցանկը բավականին ներկայացուցչական է. ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) հետ գործ են ունեցել 76,3 տոկոսը, ակցիզային հարկի հետ՝ 10,5 տոկոսը, բնապահպանական և բնօգտագործման վճարների հետ՝ 37,5 տոկոսը, տեղական հարկերի հետ՝ 37-55,8 տոկոսը: Ոչ սովորական հարկային ռեժիմներից հարցման ընտրանքում ընդգրկված են եղել միայն շրջանառության հարկ վճարողները. այդ հարկատեսակի հետ գործ են ունեցել հարցվածների 24,3 տոկոսը:


Հարցվածների միայն 41,8 տոկոսը չի իրականացրել արտաքին տնտեսական գործունեություն (տես Գծապատկեր 12): Հարցվածների մոտ մեկ հինգերորդը առնչվում է և ներմուծման, և արտահանման գործառույթների հետ: Ներմուծողների տեսակարար կշիռը տասն անգամ գերազանցում է արտահանողների թվին: Դա անուղղակիորեն վկայում է այն մասին, որ ՀՀ տնտեսությունն ունի ներմուծման հակվածություն և որ հարկային վարչարարության առումով կարևոր են անուղղակի հարկերի վարչարարության հարցերը:

Գծապատկեր 12. Ձեր բիզնեսը զբաղվո՞ւմ է ապրանքների և/կամ ծառայությունների ներմուծման և/կամ արտահանման գործունեությամբ



ԳՀՎ-ները հակված չեն անդամակցելու մասնագիտացված կառույցների կամ ոլորտային միությունների ու ասոցիացիաների: Նրանց ընդամենը 12,8 տոկոսն է անդամակցում այդպիսի կառույցների (տես Գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Ձեր կազմակերպությունը հանդիսանում է արդյո՞ք որևէ միության, ասոցիացիայի անդամ




- ✓ Նշում. 2016թ. իրականացված հարցման արդյունքների համեմատ, ոլորտային միությունների և ասոցիացիաների մեջ անդամակցության հարցում առաջընթաց է գրանցվել՝ 4 տոկոսից հասնելով 12,8 տոկոսի:

ՎԵՐԱԲԵՐՍՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ

ԳՀՎ-ներում հարցվածների 40,5 տոկոսը չգիտի, թե արդյոք մասնագիտացված կառույցները կամ ոլորտային միություններն ու ասոցիացիաները կարող են ազդել հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության բարելավման վրա (տես Գծապատկեր 14): Հարցված գործարար հարկ վճարողների 33 տոկոսը գտնում է, որ դրանք չեն կարող ազդել, և միայն 26,3 տոկոսն են հավատում, որ այդպիսի ազդեցություն կարող է լինել:


Գծապատկեր 14. Ձեր կարծիքով, միություններն ու ասոցիացիաները կարողանո՞ւմ են նպաստել հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության բարելավմանը



✓ Նշում. 2016թ. և 2013թ. իրականացված հարցման արդյունքների համեմատ, ոլորտային միությունների և ասոցիացիաների ազդեցության նկատմամբ «հավատը» նախորդ «եռամյակում» պակասել էր՝ 17 տոկոսից իջնելով և 2016թ. հասնելով 12 տոկոսի: Իսկ ներկայումս՝ 2016-2018թթ. հատվածում փաստորեն աճ ենք նկատում. գործարարների արդեն 26,3 տոկոսի մոտ հավատ կա, որ իրենց միությունները կարող են հարկային հարցերում ազդեցություն ունենալ (տես աղյուսակ Հ 3.1): Հնարավոր է, որ այդ հարցում ազդեցություն է ունեցել Հարկային օրենսգրքի կապակցությամբ կառավարության ստեղծած հանրային-մասնագիտական խորհրդի հաջող աշխատանքը, ինչպես նաև 2016թ. «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում էական փոփոխությունների իրականացումը:

ԳՀՎ-ի համար նոր իրողություն է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» գործունեությունը (տես Գծապատկեր 15):

Գծապատկեր 15. «Հարկ վճարող-հարկային մարմին» հաղորդակցության տեսանկյունից որքանո՞վ է օգտակար ՀՀ ՊԵԿ-ի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» աշխատանքը



Հավանաբար, նոր լինելով է պայմանավորված այն փաստը, որ հարցվածների 52,8 տոկոսը չգիտեն, թե այդ ինչ կառույց է և ինչ խնդիրների համար է այն ստեղծված: Միաժամանակ այդ կառույցի (նմանատիպ կառույցների) գործունեությունը «օգտակար» և «շատ օգտակար» են համարել հարցվածների 31,3 տոկոսը, իսկ «Օգտակար չէ» և «Բոլորովին օգտակար չէ» պատասխանները ընտրել է 3 տոկոսը:

Հարկային մարմիններին չհայտարարագրված շրջանառության «զգայուն» հարցի պատասխանները համադրելի են ծախսերի չփաստաթղթավորման հարցի պատասխաններին (տես Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. Ձեր գնահատմամբ որքա՞ն է կազմում ամբողջ տնտեսական գործունեության ստվերային/հարկային մարմիններին չհայտարարագրված/ շրջանառության բաժինը

Ստվերային շրջանառության բաժինը, %*	Հաճախականությունը	Տոկոսը
0	61	20
1-34	51	16.7
35-70	20	6.6
71-100	5	1.6
Ընդամենը	137	16,2³
Հրաժարվում եմ պատասխանել	6	2
Չգիտեմ	162	53.1
Ընդամենը	305	100

*Խմբավորումը մերն է. հարցվածները 0-100 տոկոսի միջակայքում նշել են կոնկրետ մակարդակ:


Աղյուսակի վերլուծությամբ ստացվում է հետևյալ պատկերը.

- Հարկային մարմիններին չհայտարարագրված շրջանառության տոկոսի վերաբերյալ հարցին հրաժարվել է կամ չի կարողացել պատասխանել գործարար հարկ վճարողների 55 տոկոսը:
- Ծայրահեղ՝ 0 տոկոս ստվերային տնտեսության մասին կարծիք են հայտնել հարցին որոշակի պատասխան տված գործարարների 20 տոկոսը:
- Հարցին որոշակի պատասխան տված գործարարների 17 տոկոսը գնահատել է ստվերային շրջանառության մասնաբաժինը մինչև 34 տոկոս:
- 35-70 տոկոս ստվերի չափի մասին խոսել են գործարարների մոտ 7 տոկոսը:
- Ստվերային շրջանառության 71-100 տոկոս մասնաբաժնի առկայության մասին նշել են հարցին որոշակի պատասխան տված գործարարների միայն 2 տոկոսը:
- Միջին ցուցանիշը կազմում է 16,2 տոկոս:

Գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից հարկային վարչարարության ռեֆորմներում գործարարները առանցքային են համարել հարկատուներին սպասարկելու ծառայությունների ընդլայնումը: Այդ ուղղությունը որպես առաջին ընտրություն մատնանշել են հարցված գործարար հարկ վճարողների 51,8 տոկոսը, մինչդեռ հարկային մարմնի կողմից «ուժի գործադրման» տարբերակները նշել է նրանց 32 տոկոսը (տես Գծապատկեր 16):

³ Հարցվածների նշած կոնկրետ գնահատականների կշռված միջին ցուցանիշն է: Տեխնիկական խնդիրների պատճառով այս հարցն ուղղվել է ընդամենը 305 գործարարի:


Գծապատկեր 16. Հարկային վարչարարության ո՞ր ուղղությունն էք համարում առանցքային գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից



✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակ 24.4), որ բարձր մակարդակում հարկային հարցերով որոշում ընդունող հարկ վճարողները (տես սույն Հաշվետվության Գծապատկեր 9, ի նկատի ունենալով երբ որոշումներ են ընդունում մեծ բաժնետերեր, բաժնետերերը միասին կամ տնօրենների խորհուրդը, այսուհետ՝ Բարձր մակարդակում հարկային հարցերով որոշում ընդունող հարկ վճարողներ) հարկ վճարողների սպասարկման ուղղությանը տալիս են 63,4 տոկոս ձայներ. ինչքան բարձրանում է հարկային սկզբունքային հարցերի քննարկման և լուծումներ տալու կորպորատիվ մակարդակը, այնքան մեծանում է համագործակցության և հարկային մարմնի կողմից սպասարկման ծառայությունները ողջունելու աստիճանը:

Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ դառնալուց հետո գործարարների մոտ մաքսային վարչարարության նկատմամբ ավելի «բարեհաճ» ընկալումներ են ձևավորվել (տես Գծապատկեր 17):


Գծապատկեր 17. Արդյո՞ք ԵԱՏՄ անդամ դառնալը մաքսային հարաբերությունների իմաստով և մաքսային մարմնի կողմից գանձվող հարկերի և պարտադիր վճարների ու մաքսային վարչարարության իմաստով Ձեզ համար ձևավորել է ավելի վստահելի ու հարմարավետ միջավայր



Ավելի վստահելի ու հարմարավետ միջավայր ձևավորված լինելու հարցին դրական են պատասխանել հարցվածների 38,3 տոկոսը, բացասական՝ 17,5 տոկոսը: Դա կարևոր է «ներմուծման հակվածություն» ունեցող երկրի համար:

Հարկային օրենսգիրքը նպաստել է հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի ավելի մատչելի լինելուն (տես Գծապատկեր 18):

Գծապատկեր 18. Համամիտ էք արդյո՞ք, որ 2018թ. սկզբից ուժի մեջ մտած Հարկային օրենսգիրքը նպաստել է հարկային հարաբերություններն ավելի ընկալելի կամ օգտվելու համար մատչելի դառնալուն




Բիզնես հանրությունը մշտապես քննարկում է Հարկային օրենսգրքի առավելություններն ու թերությունները: Այն 2016թ. հոկտեմբերին ընդունվելուց հետո երկու անգամ ենթարկվել է էական փոփոխությունների, նաև մի քանի այլ լրացումներ են կատարվել դրանում: Փոփոխությունների նախագծեր առկա են եղել նաև հենց հարցման ժամանակ: Այնուամենայնիվ գործարարները այս հարցում ավելի շատ դրական պատասխաններ են տվել (40,3 տոկոս), քան բացասական (29,1 տոկոս):

- ✓ Նշում. 2016թ. իրականացված հարցման արդյունքների համեմատ, դրական պատասխանողների տեսակարար կշիռը էականորեն աճել է, 23,4 տոկոսից դառնալով 40,3 տոկոս (տես աղյուսակ Հ3.2): **Հարկային օրենսգրքի ինստիտուտը գնալով «իր տեղը գտնում է» հարկ վճարողների ընկալումների մեջ:**

Հարկման հատուկ (արտոնյալ) ռեժիմները հարմար են և նպաստում են, որ հարկերը ավելի հեշտ հաշվարկվեն (և վճարվեն) (տես Գծապատկեր 19): Հարցվածների 56,1 տոկոսը գտնում է, որ շրջանառության հարկի և այլ նման հատուկ հարկային ռեժիմային տեսակները նպաստում են, որ դյուրին դառնա հարկ հաշվելը և վճարելը: Հարցի նկատմամբ վերաբերմունքը կարևոր է նրանով, որ Հայաստանում կիրառվում է հարկերը ինքնուրույն հաշվարկելու («ինքնագնահատման») մեխանիզմը:


- ✓ Նշում. 2016թ. իրականացված հարցման արդյունքների համեմատ, դրական պատասխանողների տեսակարար կշիռն էապես աճել է 27,7 տոկոսից դառնալով 56,1 տոկոս (տես աղյուսակ Հ3.3): Թեև 2016թ. հարցը վերաբերում էր հարկային օրինականությանը նպաստելուն, իսկ այս անգամ՝ հարկային պարտավորությունների հաշվարկմանը և վճարմանը նպաստելուն, այնուամենայնիվ կարելի է արձանագրել, որ **հարկման հատուկ համակարգերը գնալով ավելի շատ «ժողովրդականություն» են վայելում:**

Գծապատկեր 19. Ըստ Ձեզ, ներկայումս Հայաստանում սահմանված հարկման հատուկ համակարգերը (շրջանառության հարկ, արտոնագրային հարկ, ընտանեկան ձեռնարկատիրական համակարգ) նպաստում են հարկային պարտավորությունները հաշվարկելու և վճարելու հեշտացմանը



Հարկային օրենսդրությունը պահպանելը ունի շահեկան կողմեր, սակայն առայժմ Հայաստանի հարցված գործարարները դրանում ավելի շատ տեսնում են «չտուգանվելու» գործոնը, այլ ոչ թե որևէ հանրային պարտք կատարելը (տես Գծապատկեր 20):

Գծապատկեր 20. Ձեր կարծիքով, հարկային օրինապահությունը բիզնեսի համար ինչո՞վ է շահեկան




«Վճարի հարկերը քնիր խաղաղ» պատասխանը հավաքել է կարծիքների 44 տոկոսը: Ընդ որում, համարելով, որ այդ պատասխանը «տուգանվելու հավանականության նվազման»

(13,5 տոկոս) հումանիշն է, ապա կատարելի, որ պատասխանների 2/3-ը պայմանավորված են վախով, այլ ոչ թե պարտք կատարելու ցանկությամբ: Հանրային պարտավորություն կատարելու, դրա հետ կապակցված՝ երկրի զարգացմանը նպաստելու գծով պատասխանները, որ ներառված են «այլ» պատասխանում կազմում են ամբողջի ընդամենը 2,1 տոկոսը: Տեղին է նշել, որ հարկային օրինապահությունը կոնկրետ իրենց բիզնեսի զարգացման հետ կապել են հարցված գործարարների 12,5 տոկոսը:

- ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների համեմատ, 2018թ. տեղի է ունեցել հետևյալ դինամիկան (տես աղյուսակ Հ 3.4).
 - ✓ մեծանում է հարկային օրինապահության՝ «վախով» պայմանավորված մասը՝ 53,3 տոկոս, 60,4 տոկոս և 65 տոկոս, համապատասխանաբար:
 - ✓ փոքրանում է կոնկրետ իրենց բիզնեսի զարգացմանը նպաստելուն հավատացողների մասը՝ հինգ տարում 19,8 տոկոսից իջնելով մինչև 12,5 տոկոս:

Հարկային օրենսդրությունը պահպանելու պարագայում հարցվածներն ակնկալում են հատկապես գնաճ (տես Գծապատկեր 21):

Գծապատկեր 21. Ձեր կարծիքով, ո՞րն է բիզնեսի համար հարկային օրինապահության ամենաբացասական հետևանքը




Առավել բացասական ազդեցություն գործարարների 24,5 տոկոսը տեսնում է այն բանում, որ ապրանքների ու ծառայությունների գները չեն կարող համապատասխանորեն բարձրացվել: Հետաքրքիր է, որ բիզնեսամենները պատրաստ են ավելի օրինապահ լինել, սակայն նրանք զգուշանում են, նրանց համար կարևոր է դրա արտաքին գնահատականը. 13,3 տոկոսը կարծում է, որ «կողքինները» չեն գնահատի, և 19,5 տոկոսն էլ կարծում է, որ «հարկայինը» չի գնահատի: Սա պետք է համարել անհանգստացնող նշան՝ հարկային վարչարարության իմաստով: Շատ լավատեսական է «բացասական հետևանք չկա» պատասխանի 22,5 տոկոս բաժինը:

- ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների համեմատ, տեղի է ունեցել հետևյալ դինամիկան.
 - ✓ մեծանում է որևէ բացասական հետևանք չտեսնողների թիվը (2013թ.՝ 8 տոկոս, 2016թ.՝ 8,6 և 2018թ.՝ 22,5 տոկոս, համապատասխանաբար; տես՝ Աղյուսակ Հ3.5):
 - ✓ Էականորեն նվազում է այն հարկ վճարողների տեսակարար կշիռը, որոնք մտածում էին, որ եթե հարկերը օրինականորեն վճարեն, ապա կկորցնեն բիզնեսը, քանի որ հաճախորդները կպակասեն. համապատասխանաբար 24,8 տոկոս, 22 տոկոս և 9,5 տոկոս 2018 թվականին: Բիզնեսի նկատմամբ չեզոք լինելու կողմնակիցների թիվը հատկապես աճել է 2016-2018թթ. հատվածում:

ՊԵԿ/հարկային մարմինների պահվածքը վերջին ամիսների ընթացքում, համաձայն հարցման արդյունքների, ակնհայտորեն դրականորեն է փոխվել (տես Գծապատկեր 22): Դրանում կհամոզվենք, եթե նույնիսկ վերցնենք ոչ թե բոլոր դրական պատասխանների հանրագումարը (72,7 տոկոս), այլ միայն «վստահորեն այո» պատասխանը (28,1 տոկոս), և այն համադրենք «ոչ» պատասխանների բաժնի (17,8 տոկոս) հետ: Այս զարմանալի արդյունքը մեկնաբանելիս հարկ է նկատի ունենալ, որ հարկային մարմնի պահվածքի ընդհանուր ընկալման կայուն դրական ցուցանիշ ունենալու համար ժամանակ է պետք, և այս պատկերը կարելի է դիտարկել որպես առաջնային ու անհրաժեշտ հոգեբանական քաջալերանք, որը, թերևս, կրում է նաև երկրում իրավիճակային փոփոխության ազդեցությունը:

Գծապատկեր 22. Ձեր կարծիքով փոխվել է արդյո՞ք ՊԵԿ/հարկային մարմինների պահվածքը վերջին ամիսների ընթացքում



Գնումների/ձեռքբերումների չփաստաթղթավորման մակարդակի մասին չեն կարողացել կամ չեն ցանկացել պատասխանել հարցված գործարարների գրեթե կեսը՝ 49,4 տոկոսը (տես աղյուսակ 7):

Աղյուսակ 7. Տնտեսական գործունեության Ձեր ոլորտում որքա՞ն է կազմում ապրանքների, ծառայությունների առանց փաստաթղթավորման ձեռք բերման բաժինը⁴


Առանց փաստաթղթավորման գնումների բաժինը բոլոր գնումներում, %-ով*:	Հաճախականությունը	Տոկոսը
0	84	22.2
1-34	88	23.2
35-70	20	5.3
Հրաժարվում եմ պատասխանել	20	5.3
Զգիտեմ	167	44.1
Ընդամենը	379	100

*Խմբավորումը մերն է. հարցվածները 0-100 տոկոսի միջակայքում նշել են կոնկրետ մակարդակ:

Հետաքրքիր է այս հարցին պատասխանների բաշխումը. չփաստաթղթավորումների մինչև 70 տոկոսի մասին հայտնած ռեսպոնդենտների տեսակարար կշիռը՝ 28,5 տոկոս, միայն մի քանի տոկոսային կետով է ավելի նրանց տեսակարար կշռից (22,2 տոկոս), որոնք կարծում են, որ նման երևույթ առհասարակ չկա: Առանց փաստաթղթավորման գնումների բաժնի միջին գնահատականը բոլոր գնումներում կազմել է 12,7 տոկոս:

Ստվերային գնումների, ստվերային տնտեսության կրճատումը ուղղակի կամ անուղղակի իմաստով շահեկան են համարել հարցվածների 80,1 տոկոսը (տես Գծապատկեր 23):

Գծապատկեր 23. Ձեր կարծիքով ստվերային տնտեսության և ստվերային գնումների ծավալների կրճատումը ինչո՞վ է շահեկան




Հարցվածների ընդամենը 8 տոկոսն են գտել, որ ստվերային տնտեսության կրճատումը շահեկան չէ: Պատասխանները ցույց են տալիս զարմանալի բարձր գիտակցություն և

⁴ Հարցվածների նշած կոնկրետ գնահատականների կշռված միջին ցուցանիշն է: Տեխնիկական խնդիրների պատճառով այս հարցն ուղղվել է ընդամենը 305 գործարարի:

համերաշխություն. հարցվածների կեսը կարծիքով սովորաբար տնտեսության կրճատումը կհանգեցնի հարկային եկամուտների աճին:

Սովորաբար տնտեսության կրճատման՝ ոչ շահեկան լինելու մասին կոնկրետ հարցին դժվարացել են պատասխանել (պատասխանել են «չգիտեմ») հարցվածների 16,2 տոկոսը (տես Գծապատկեր 24):

Գծապատկեր 24. Ինչո՞վ շահեկան չէ սովորաբար տնտեսության և սովորաբար գնումների ծավալների կրճատումը



Հարցված գործարարների յուրաքանչյուր հինգերորդը (21 տոկոս) ըստ էության համաձայն չէ ապրանքը ձեռք բերել ավելի թանկ, սակայն օրինական մատակարարից: Այնուամենայնիվ, գործարարների հիմնական անհանգստությունը ոչ թե գնաճն է (21 տոկոս), այլ, հասարակ բառերով ասած, այն, որ խառնաշփոթ կլինի, տնտեսական կապերը կընդհատվեն, և որ «հասարակության մեջ հակադրություններ կառաջանան (23,6 տոկոս):

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ


Այս բաժնում մանրամասն հարցումներ են իրականացվել հարկային մարմնի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ, առանձնացնելով.

- Դրանց օգտակարության հարցը
- Դրանց որակի հարցը
- Էլեկտրոնային եղանակով մատուցվող ծառայությունները
- Հարկ վճարողներին սպասարկման ծառայությունները:

Պետք է նշել, որ այս ձևաչափով և մանրամասն մասնագիտական հարցում Հայաստանում իրականացվել է առաջին անգամ:

Գործարար հարկ վճարողները հատկապես օգտակար են համարել (հարցվածների 98,1 տոկոսը) հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգը (տես Գծապատկեր 25):

Գծապատկեր 25. Ինչպե՞ս կգնահատեք ՀՀ հարկային ծառայության կողմից ներկայումս մատուցվող հետևյալ ծառայությունների օգտակարությունը



Ծառայությունների օգտակարության հարցադրման պատասխանների առումով պետք է առանձնացնել հետևյալը.

- Մի քանի տեսակի ծառայություններ կան, որոնց մասին գործարար հարկ վճարողները վատ են տեղեկացված, հետևաբար դա նրանց օգտակար չէ ըստ էության.
 - «օրինապահ հարկ վճարողների գրանցման համակարգ» տեսակի ծառայության օգտակարության մասին «չգիտեմ» պատասխանն են տվել հարցվածների 24 տոկոսը, «հարկային օրացույց»-ի մասին՝ 18 տոկոսը և «ՀՀ հարկ վճարողների որոնման համակարգ»-ի մասին՝ 10,3 տոկոսը:
- Պատասխանների համանման լինելը թույլ է տալիս ենթադրել, որ շփոթության աստիճան իրար նման են հնչում «առցանց ծանուցման համակարգ», «առցանց նամակագրության համակարգ» և «էլեկտրոնային փոստային առաքման համակարգ» անվանումներով ծառայությունները:
- Ակնհայտ օգտակար են ու այդպես էլ հստակ ընկալվել են «հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ը և «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգ»-ը՝ 98,1 տոկոս և 96 տոկոս, համապատասխանաբար:
 - ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների համեմատ, հինգ տարում արձանագրվում են հետևյալ փոփոխությունները.
 - Կտրուկ մեծանում է «հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի ջատագովների թիվը և «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգ»-ինը՝ համապատասխանաբար 85,8 տոկոս և 140,8 տոկոս աճ:
 - Դանդաղ է թափ հավաքում և աճում հեռախոսազանգերի կենտրոն/թեժ գծի օգտակարության ցուցանիշը՝ 30,9 տոկոսով աճ:
 - Հարկային մարմնի մատուցած զանազան ծառայությունների օգտակարության մասին հարկատուների՝ 2013թ. և 2018թ. տված գնահատականները համեմատելիս ստացվում է հետևյալ պատկերը.


Աղյուսակ 8. Հարկային մարմնի մատուցած ծառայությունների օգտակարության գնահատականը (օգտակար և շատ օգտակար պատասխանների հանրագումարը, % ամբողջի մեջ)

Ծառայությունների տեսակները	2013	2016	2018	2013-18թթ. փոփոխությունը, տոկոսային կետ
Առցանց ծանուցման համակարգ	48.8	73.6	92.3	43.5
էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգ	58.0	78.8	96.0	38.0
Առցանց նամակագրության համակարգ	57.8	72.5	90.5	32.8
ՀՀ հարկ վճարողների որոնման համակարգ	55.8	70.2	86.8	31.0
էլ. փոստային առաքման համակարգ	61.8	70.9	87.3	25.5
Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ	75.3	83.8	98.0	22.8
Հեռախոսազանգերի կենտրոն/թեժ գիծ	65.25	73.8	81.8	16.5
Հարկային օրացույց	66.8	74.6	79.8	13.0
Օրինապահ հարկ վճարողների գրանցման համակարգ	58.8	69.1	71.8	13.0
Բոլոր նշվածները	60.9	74.1	87.1	26.2

Ստացված տվյալների վերլուծությունը վերստին վկայում է ժամանակակից թվային տեխնոլոգիաների հիմքի վրա զանազան ծառայությունների, հատկապես առցանց ծանուցման և էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգերի, օգտակարության գնահատականի էական աճը: Վերոբերյալ աղյուսակում նշված ծառայությունների օգտակարության միջին գնահատականը 2013-2018թթ. ավելացել է մոտ 26 տոկոսային կետով՝ գրեթե հավասարաչափ ըստ ժամանակային հատվածների:

Աննախադեպ բարձր որակական գնահատականի են արժանացել ՊԵԿ/հարկային մարմնի կողմից մատուցվող երկու ծառայություններ. «հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ը (91,8 տոկոս) և «առցանց ծանուցման համակարգ»-ը (89,8 տոկոս, տես Գծապատկեր 26):

Գծապատկեր 26. Ինչպե՞ս էք գնահատում հարկային մարմինների կողմից Ձեզ մատուցվող էլեկտրոնային ծառայությունների որակը




Ծառայությունների որակի հարցադրման պատասխանների առումով պետք է առանձնացնել հետևյալը.

- Գործարարներն առավել տեղյակ են «հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի և «էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման համակարգ»-ի մասին:
- Հարկային մարմնի նկատմամբ ընդհանուր և տրադիցիոն ոչ բարյացակամ վերաբերմունքի պարագայում հարցման պատասխաններում այդ երկու ծառայությունների որակի գծով՝ միայն «լավ» և «շատ լավ» պատասխանների հանրագումարով արդեն 63,8 տոկոս և 61,1 տոկոս, համապատասխանաբար, հավաքելը պետք է համարել շատ լավ ցուցանիշ (ավելացնելով նաև «բավարար»-ը ստացվում է ավելի քան 90 տոկոս): Դրանք կարելի է համարել չափորոշիչային մյուս ծառայությունների որակի գնահատականների համար:


- Նորից «դուփում է տեղում» «օրինապահ հարկ վճարողների համակարգ» անվանումով ծառայությունների տեսակը, 31 տոկոսը չգիտեն դա ինչ է և միայն 46,8 տոկոսն են այն գնահատել դրական, մինչդեռ մյուս ստանդարտ ծառայությունների գծով դրական կարծիքների բաժինը կազմել է նվազագույնը 60 տոկոս:

Էլեկտրոնային ծառայությունների համակարգը գործարարների 70,8 տոկոսի կարծիքով նպաստում է բոլոր հարկային պարտավորությունների կատարմանը (տես Գծապատկերներ 27, 28, 29, 30):


Գծապատկեր 27. Արդյո՞ք հարկային մարմինների կողմից ներմուծված էլեկտրոնային ծառայությունների համակարգը նպաստում է բոլոր հարկային պարտավորությունների կատարմանը




Գծապատկեր 28. Ասացե՞ք ինչդեմ, թե որքանով եք համամիտ հետևյալ տեսակետների հետ՝ օգտագործելով 1-4 սանդակը, որտեղ 1-ը նշանակում է նշանակում է «Բոլորովին համամիտ չեմ» և 4-ը՝ «Լիովին համամիտ եմ»



Գծապատկեր 29. Արդյո՞ք վերջին երեք տարիներին հարկային վարչարարության գործառույթների ավտոմատացումը հանգեցրել է հարկ վճարողների և հարկային մարմինների միջև շփումների ու պարտադրված հաղորդակցության մակարդակի նվազեցմանը



Գծապատկեր 30. Արդյո՞ք վերջին երեք տարիներին հարկային վարչարարության գործառույթների ավտոմատացումը հանգեցրել է հարկ վճարողների մոտ բիզնես վարելու ծախսերի (վարչական ծախսերի) կրճատմանը




Էլեկտրոնային ծառայությունների համակարգի ու դրա՝ վերջին երեք տարիների զարգացումների տեսակետից ներկայացված բազմապիսի հարցադրումների պատասխանների առումով պետք է առանձանցնել հետևյալը.

- Հարցված գործարարները **գնահատել են (նվազողական կարգով) հետևյալի կարևոր տեղաշարժերը.**
 - հաշվետվությունների **ներկայացնելը (հանձնելը)** այժմ ավելի պարզ և հեշտ է (88,5 տոկոս):
 - հարկային վարչարարական գործառույթների ավտոմատացումը հանգեցրել է շփումների և **պարտադրված հաղորդակցության նվազմանը** (87,8 տոկոս):
 - հարկեր **վճարելու** ընթացակարգերն այժմ ավելի պարզ ու հեշտ են, քան երեք տարի առաջ (82,3 տոկոս):
 - հարկերը **հաշվարկելը** այժմ ավելի հեշտ ու պարզ է, քան երեք տարի առաջ (80 տոկոս):
- հարկային վարչարարության գործառույթների ավտոմատացումը, որ տեղի է ունեցել վերջին երեք տարիների ընթացքում, հանգեցրել է **բիզնեսի ծախսերի կրճատման** հարցվածների 63 տոկոսի կարծիքով:
- ✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակ Հ 4.6.), որ ԱԶ-ների դեպքում նրանց միայն 45,7 տոկոսն է համաձայն


որ բիզնեսի ծախսերը կրճատվել են հարկային գործառույթների ավտոմատացման հետևանքով:

Երեք նոր տեսակի առցանց ծառայությունների վերաբերյալ հարցերից պարզվում է, որ գործարարները լավատեղյակ են միասնական հաշվի կիրառման և մյուս երկու առցանց ծառայությունների մասին, և գտնում են, որ դրանք նպաստում են բիզնես գործընթացների պարզեցմանը: Այդուհանդերձ, միասնական հաշվի կիրառման հարցում այդ համոզվածությունը համեմատաբար ցածր է՝ 62.2 տոկոս (տես Գծապատկերներ 31, 32):

Գծապատկեր 31. Հարկային մարմինների կողմից մատուցվող թվարկված առցանց նոր ծառայություններից որի մասին գիտեք



Գծապատկեր 32. Արդյո՞ք հարկային մարմնի կողմից մատուցվող երեք տեսակի նոր ծառայությունները ուղղակիորեն նպաստում են կամ պարզեցնում Ձեր բիզնես գործընթացները




Այսպիսով, երեք տեսակի նոր առցանց ծառայությունների պատասխանների առումով պետք է առանձանցնել հետևյալը.

- գործարարներն առավել լավատեղյակ են հարկերն էլեկտրոնային եղանակով վճարելու հնարավորության մասին,

- բիզնես գործընթացների պարզեցմանը համեմատաբար սակավ է նպաստում (նպաստավոր են համարել հարցվածների 62,2 տոկոսը) բոլոր հարկատեսակների համար միասնական գանձապետական հաշվի բացումը,

Բավականին բարձր գնահատականի են արժանացել վերջին երեք տարիների ընթացքում հարկային մարմնի կողմից ձեռնարկված հարկային վարչարարության միջոցառումները. դրանք բավարար և դրական են գնահատել հարցվածների 94,5 տոկոսը (տես Գծապատկեր 33):

Գծապատկեր 33. Ինչպե՞ս եք գնահատում հարկային մարմնի կողմից վերջին երեք տարիներին ձեռնարկված հարկային վարչարարության բարելավման միջոցառումները (էլեկտրոնային ծառայությունների ներմուծումը, հարկերի հաշվարկման պարզեցումները ևն)



- ✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակ Հ 4.8), որ «դրական» ցուցանիշն ավելի բարձր է (61,7 տոկոս) այն հարկ վճարողների մոտ, ովքեր օգտվում են հարկային և հաշվապահական խորհրդատվությունից: Ի դեպ, դրանց բաժինը մեծ չէ՝ բոլոր հարցվածների միայն 8 տոկոսը:

Աղյուսակ 9. Վերջին տարիներին հարկային վարչարարության բարելավման միջոցառումների գնահատականը*


	2013	2016	2018
Խիստ դրական	0.5	1.3	7.0
Դրական	20.5	22.5	55.5
Դրական ընդամենը	21.0	23.8	62.5
Բավարար	34.0	33.5	32.0
Բացասական	23.3	20.7	3.0
Խիստ բացասական	14.5	6.0	0.5
Բացասական ընդամենը	37.8	26.7	3.5
ԶԳ/ՀՊ	7.3	16.0	2.0
Ընդհանուր	100.0	100.0	100.0

* Նշում. 2013թ. և 2016թ. հարցը ձևակերպված է եղել այսպես. «Ինչպե՞ս եք գնահատում հարկային օրենսդրության և վարչարարության բարելավմանն ուղղված ՀՀ կառավարության կողմից վերջին մի քանի տարիներին իրականացվող միջոցառումների ազդեցությունը բիզնես-գործունեության և բիզնես միջավայրի վրա»:

- ✓ 2018թ. հարցումների արդյունքների համադրումը 2016թ. և 2013թ. տվյալների հետ ցույց է տալիս, որ հարկային վարչարարության բարելավման միջոցառումների առնչությամբ դրական գնահատականների բաժինն էապես ավելացել է՝ 21 տոկոսից հասնելով 62,5 տոկոսի: Այդուհանդերձ, այդ տարիներին հարցվածների մի հաստատուն հատված՝ մոտ մեկ երրորդը դրանք բավարար է համարել:

Հարցվածների զգալի մասը վստահ չէ, որ հարկային հարցերով պաշտոնական պարզաբանումներ տալու իրավասությունը ՀՀ ֆինանսների նախարարությանը փոխանցելը (2018թ. հուլիսի 1-ից) նպաստելու է հարկային վարչարարական գործառնությունների ավելի հստակ կատարմանը, ՊԵԿ-ի՝ սեփական գործառնությունների վրա կենտրոնանալուն (տես Գծապատկեր 34):

Գծապատկեր 34. Որքանով ե՞ք համամիտ, որ հարկային հարցերով պաշտոնական պարզաբանումներ տալու իրավասությունը ՀՀ ՊԵԿ-ից ՀՀ ֆինանսների նախարարությանը փոխանցելը նպաստելու է ՀՀ ՊԵԿ-ի կողմից հարկային վարչարարության գործառնությունների ավելի հստակ իրականացմանը




Կարելի է ենթադրել, որ այդ նախաձեռնությունը դեռևս հաջող ընթացք չի ստացել.

- 41,8 տոկոսը տեղյակ չեն այսպիսի փոփոխության մասին,
- գործարար հարկ վճարողների միայն 24 տոկոսն են համամիտ, որ դա նպաստելու է հարկային մարմնի աշխատանքի հասցեականության աճին,
- որոշակի «դիմադրություն» կա այդ հարցում, քանի որ գործարարների մոտ մեկ երրորդը (34,1 տոկոսը) համամիտ չեն, որ դա լավ գաղափար էր:

- ✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակ Հ4.9), որ իրարամերժ պատասխաններ են ստացվում նույնիսկ այն հարկ վճարողներից, ովքեր օգտվում են հարկային ու հաշվապահական խորհրդատվությունից:

Լուրջ նախապատրաստման և պարզաբանման կարիք ունի հորիզոնական մոնիթորինգի համակարգը (տես Գծապատկեր 35):


Գծապատկեր 35. Հորիզոնական մոնիթորինգի համակարգը ակնհայտորեն օգտակար գործիք է հարկային վարչարարության պարզեցման և հարկային մարմինների հետ հաղորդակցության իմաստով և մենք կմիանանք այդ համակարգին



✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակներ 24.11 և 24.12), որ տնտեսության միջինի համեմատ այս համակարգի մասին համեմատաբար պակաս տեղեկացված են ու նրա օգտակարության մասին ավելի շատ չգիտեն առևտրի և ծառայությունների ոլորտում՝ 63,2 տոկոս, այնինչ արտադրության ոլորտի հարկ վճարողների մոտ այն միջինից ցածր է՝ 56,5 տոկոս:

ՊԵԿ ուսումնական կենտրոնի առաջարկած ծրագրերը արդիական են համարել, իսկ սեմինարների մասին իրազեկումը՝ արդյունավետ, ու դասընթացավարների պրոֆեսիոնալիզմը և դասերի որակը բարձր են գնահատել *կենտրոնի մասին տեղեկացվածների 84.1, 84.4 և 78.6 տոկոսը, համապատասխանաբար*: Միաժամանակ, կենտրոնի մասին կարծիք հայտնաձևների 34.4 տոկոսը համամիտ չէ այն տեսակետին, որ ուսումնական կենտրոնի առաջարկած դասընթացներն ավելի օգտակար և արդյունավետ են, քան մասնավոր սեկտորում նման ծառայություններ մատուցողներինը (տես Գծապատկեր 36):


Գծապատկեր 36. Գնահատեք, խնդրեմ, ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն»-ի աշխատանքների որակը, պատասխանելով, թե որքանով եք համամիտ հետևյալ տեսակետների հետ (առանց «չգիտեմ» և «հրաժարվում եմ պատասխանել» տարբերակների)



Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ կենտրոնի աշխատանքների մասին «չգիտեմ» պատասխանն են տվել կամ *հրաժարվել են պատասխանել* բոլոր հարցվածների համարյա կեսը (տես Գծապատկեր 36.1). դրա պատճառն, ամենայն հավանականությամբ այն է, որ գործարարների ճնշող մեծամասնությունը՝ մոտ 80 տոկոսը, օրինակ, հարկային և հաշվապահական թեմաներով վերապատրաստումների համար որևէ գումար չի

հատկացնում: Բոլոր պատասխանները դիտարկելու դեպքում ստացվում է, որ դասընթացների մասին որևէ պատասխան տվածների թվում կենտրոնի աշխատանքների մասին դրական կարծիքի են հարցվածների մեկ երրորդից մինչև կեսը, իսկ բացասական միայն 9-15 տոկոսը:

Գծապատկեր 36.1 Գնահատեք, խնդրեմ, ՀՀ ՊԵԿ «Ուսումնական կենտրոն»-ի աշխատանքների որակը, պատասխանելով, թե որքանով եք համամիտ հետևյալ տեսակետների հետ (բոլոր պատասխանները)




Գործարարների պատասխանից կարելի է եզրակացնել, որ ՊԵԿ ուսումնական կենտրոնը գործարարների շրջանում հետագա ճանաչման և ավելի ամուր հաստատման կայացման փուլում է:

Հեռախոսազանգերի կենտրոնի (թեժ գծի) աշխատանքների որակի մասին ևս «չգիտեմ» պատասխանների բաժինը նկատելի է եղել (տես Գծապատկեր 37): Գործարարների անհրազեկությունն առավել ընդգծված է եղել այն մասին, որ Հեռախոսազանգերի կենտրոնում քայլեր են ձեռնարկվում «հաճախ տրվող հարցերի ցանկի» կազմման և միատեսակ պատասխաններ ձևավորելու միջոցով սպասարկման որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ինչևէ, բոլոր պատասխանները դիտարկելիս անգամ ստացվում է, որ թեժ գծի.


- պատասխանող մասնագետների պրոֆեսիոնալիզմի վերաբերյալ դրական կարծիք ունեն բոլոր հարցվածների 52.8 տոկոսը, իսկ բացասական՝ 23.6 տոկոսը,
- պատասխաններն արդյունավետ են համարել (խորհրդատվական կազմակերպություններին դիմելու անհրաժեշտությունը վերացել է) հարցվածների 49.8 տոկոսը, իսկ ոչ արդյունավետ՝ 27.8 տոկոսը,
- հեռախոսազանգերին արագ պատասխանելու պնդմանը համամիտ են եղել 41.5 տոկոսը, մինչդեռ 39 տոկոսը չի համաձայնել այդ պնդմանը,

Գծապատկեր 37. Արտահայտեք, խնդրեմ, Ձեր կարծիքը ՀՀ ՊԵԿ «Հեռախոսազանգերի կենտրոն»-ի («Թեժ գծի») աշխատանքների որակի վերաբերյալ



Կենտրոնի ծառայությունների որակի մասին առավել իրազեկների պատասխանները դիտարկելիս (Գծապատկեր 37.1) թեև դրանց որակից ակնհայտ գոհունակություն հայտնաձևների բաժինն ավելի մեծ է թվում, արագ արձագանքման կարիքը ևս ավելի է ցցուն է դառնում:


Գծապատկեր 37.1 Արտահայտեք, խնդրեմ, Ձեր կարծիքը ՀՀ ՊԵԿ «Հեռախոսազանգերի կենտրոն»-ի («Թեժ գծի») աշխատանքների որակի վերաբերյալ (առանց «չգիտեմ» տարբերակի)



✓Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը ցույց է տալիս, որ կենտրոնի աշխատանքների որակի նկատմամբ ավելի պահանջկոտ են հարցվածների այն ենթախմբերը, որոնք օգտվում են հարկային, աուդիտորի կամ հաշվապահական խորհրդատվությունից. նրանք ավելի արագ պատասխան են ակնկալում թե՛ գծից (տես աղյուսակ 24.21): Հեռախոսազանգերին պատասխանող մասնագետների պրոֆեսիոնալիզմի նկատմամբ առավել պահանջկոտ են երիտասարդ՝ մինչև 6 տարի գործող, բիզնեսները (տես աղյուսակ 24.22):

Հարկ վճարողների սպասարկման կենտրոնների աշխատանքի վերաբերյալ ընկալումը և գնահատականները շատ բարձր են, միաժամանակ դրանց տեխնիկական աջակցության հարցում կան վերապահումներ: (տես Գծապատկեր 38):

Գծապատկեր 38. Գնահատեք, խնդրեմ, հարկ վճարողների սպասարկման կենտրոնների աշխատանքների որակը, պատասխանելով, թե որքանո՞վ եք համամիտ հետևյալ տեսակետների հետ




Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

- գործարարների 75,5 տոկոսը կողմ են, «քաջալերում» են սպասարկման ծառայությունների առանձնացումը հարկային ստուգումների և գումարների հավաքագրման հարկային գործառույթներից,
- գործարարներն ըստ էության չեն կարողում սպասարկման կենտրոնների պատերին զետեղված տեղեկատվությունը (42,6 տոկոսի պատասխանը չգիտեմ-ն է կամ համամիտ չլինելը), դրանք թերևս հնարավոր չէ օգտագործել իրենց գործարքների հարկային հետևանքները գնահատելու համար,
- հերթերի կառավարման վահանակը, անանուն գնահատման սարքավորումները և տեղեկատվական տերմինալները ֆունկցիոնալ և օգտակար են համարել հարցվածների համապատասխանաբար՝ 59,6, 52,6 և 58,5 տոկոսը: Մինևույն

Ժամանակ, դրանց մասին չիմացողների բաժինը ևս նկատելի է եղել՝ 26.3, 36.8 և 34.8 տոկոս, համապատասխանաբար:

Միասնական գանձապետական հաշվի առավել հայտնի մասը 24/7 ռեժիմով հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավորությունն է (տես Գծապատկեր 39): Նշենք, որ հարցաթերթի այս հարցին պատասխանելիս գործարարները հայտնել են, թե որքանով են համամիտ գանձապետական պահառուի մասին զանազան տեսակետների հետ:

Գծապատկեր 39. Որքանո՞վ եք համամիտ միասնական գանձապետական հաշվի մասին հետևյալ տեսակետների հետ




Ամփոփելով միասնական գանձապետական հաշվի մասին վերոբերյալ գծապատկերում արտացոլված տվյալները ստացվում է հետևյալը.

- գործարարները գերակշիռ մեծամասնությունը (77 տոկոսը) համամիտ է, որ կարողանում են 24/7 ռեժիմով առցանց տեսնել իրենց հարկային պարտավորությունների վիճակը,
- հարցվածների 72,3-ական տոկոսը համամիտ է, որ այդ հաշվի շնորհիվ բացառվել է գերավճարներ կատարելու ոչ ֆորմալ հորդորը հարկային մարմինների կողմից, ինչպես նաև պարզեցվել են ճշտված հաշվետվությունների ներկայացման արդյունքում արվող վերահաշվարկները և ժամկետանց պարտավորությունների նկատմամբ տույժ-տուգանքների հաշվարկման մեխանիզմները:

Բավականին դրական վերաբերմունք է արձանագրվել հարկային վարչարարությամբ զբաղվողների (ՊԵԿ-ի աշխատակիցների) իրենց գործառույթներն իրականացնելիս ազնիվ և պրոֆեսիոնալ լինելու առումով (65,6 տոկոս, տես Գծապատկեր 40):

Գծապատկեր 40. Արդյո՞ք հարկային վարչարարություն իրականացնողները պրոֆեսիոնալ ու ազնիվ են իրենց գործառույթներն իրականացնելիս




✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել (տես աղյուսակ Հ4.23. և աղյուսակ Հ4.24.), որ


- ԱՁ-ների մոտ բացասական պատասխաններն ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն` 19,3 տոկոս` միջին 15,8 տոկոսի համեմատ:
- Նույն կերպ բացասական պատասխաններն միջինի համեմատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն մարզերում (Երևանից դուրս)` 18,4 տոկոս:

Հարկային կանոնակարգերում փոփոխությունների մասին տեղեկատվության ստացման ցանկալի աղբյուրը անմիջականորեն հարկային մարմիններն են (տես Գծապատկեր 41):

Գծապատկեր 41. Որտե՞ք են հարկային վարչարարական կանոնակարգերում փոփոխությունների մասին տեղեկատվության Ձեր հիմնական աղբյուրները



Գծապատկեր 42. Նշե՞ք հարկային մարմնից տեղեկատվության ստացման Ձեր նախընտրելի եղանակը



Դիտարկելով հարկային հարցերի վերաբերյալ տեղեկատվության ստացման աղբյուրների առկա իրավիճակի և ցանկալիի վերաբերյալ վերը ներկայացված երկու հարցերի պատասխանները, կարելի է նշել հետևյալը.

- ներկայումս ինֆորմացիան ավելի շատ ստացվում է Պաշտոնական տեղեկագրերից («իրավական տեղեկատվական համակարգեր, arlis.am, irtek.am» և այլն), սակայն գործարարներն ավելի հակված են դրա հետ զուգահեռաբար և ավելի աճող ծավալներով տեղեկատվություն ստանալ ուղղակիորեն հարկային մարմնից՝ ծանուցումների տեսքով,
- գործարարներին հարց էր տրվել նաև, թե ներկայումս մատուցվող ծառայություններից որի գծով կուզենային ունենալ նոր մոտեցումներ (տես Գծապատկեր 42). պատասխանների մեջ ակնհայտ գերակայող է՝ հարկային օրենսդրության և կանոնակարգերի փոփոխությունների մեջ անմիջականորեն հարկային մարմնից օպերատիվորեն և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ ծանուցումներ ստանալը, տեղեկացում ունենալը:
 - ✓ Նշում. 2016թ. իրականացված հարցման պատասխանների հետ համադրումը ցույց է տալիս էական փոփոխություն.

- 2016-ին հարկային փոփոխությունների մասին տեղեկացվելու աղբյուրի իմաստով արձանագրվել է, որ «Հարկային տեսչությունը» և «այլ անձինք/բիզնեսները» իրենց դիրքերն ակնհայտորեն զիջել են պաշտոնական տեղեկագրերին և հարկային ծառայության կայքէջին; աճել է նաև սոցցանցերի դերակատարումը:
- Այժմ փաստորեն նորից վստահության աճ է գրանցվում ուղղակիորեն հարկային մարմնից տեղեկություններ ստանալու իմաստով: Թերևս գործարարների համար կարևոր է աղբյուրի մասնագիտական մակարդակը:

✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ տարբեր խմբեր տարբեր նախասիրություններ և մոտեցումներ ունեն հարկային տեղեկատվության աղբյուրների հարցում (տես աղյուսակ Հ4.25, Հ4.26 և Հ4.27):

- Մարզերում հակված են դեպի հարկային մարմինները, բոլոր ձևերով. հեռախոսագանգերի կենտրոն, կայքէջ և ուղղակիորեն և «հեռու» են խորհրդատվական ընկերություններից և տպագիր աղբյուրներից:
- ԱԶ-ները որոշ չափով ավելի հակված են տեղեկություններ ստանալու «այլ անձանց»-ից (33.9 տոկոս՝ միջին 28.8 տոկոսի դիմաց) և ավանդական ՁԼՄ-ներից (21.4 տոկոս՝ միջին 10.6 տոկոսի դիմաց):
- «Երիտասարդ գործարար միավորները (6 տարուց պակաս փաստացի (ակտիվ) գործող բիզնեսները)» միջինի համեմատ փոքր-ինչ ավելի հակված են օգտագործել տպագիր աղբյուրները, սոցիալական մեդիան և ՁԼՄ-ները:

Հարկային մարմնին սովորաբար ոչ ուղղակիորեն վերագրելի՝ «հարակից» ծառայությունների ու կարգավորումների տեսակների կապակցությամբ հարցը բարդ է գործարարների համար, չեն կողմնորոշվում (տես Գծապատկեր 43):

Գծապատկերի տվյալները արտահայտում են հետևյալ պատկերը.

- գործարարները չեն կարողացել գնահատել առաջարկված հինգ «հարակից» պետական- հանրային գործառնությունները, որոնք Հայաստանում (ի տարբերություն այլ երկրների) հարկային մարմնի իրավասությունների և պարտականությունների մեջ են: Հատկապես բարդ է եղել այն, թե արդյոք տեղին է, որ հարկային մարմինը նաև իրականացնում է նախաքննության մարմնի գործառնություն;
- համարվել է, որ թվարկված հինգ գործառնություններից միայն հաշվապահական հաշվառման ծրագրերի կիրառման պահանջի վերաբերյալ վերահսկողությունը և Առանց պետական գրանցման և/կամ առանց լիցենզիայի (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հսկողությունն է, որ օգտակար է հարկային մարմնի բուն անելիքի իմաստով: Գործարարները «կասկածել են», որ արժե հարկային մարմինը նաև հետամուտ լինի արժութային կարգավորման օրենսդրության վերահսկողությամբ և նաև, նույն կերպ, շատ համոզված չեն, որ հարկային բուն անելիքները չեն տուժում, երբ ՊԵԿ-ին օրենքով պարտադրվել է նաև հետևել հարկ վճարողների կողմից կանխիկ գործարքների սահմանաչափերի կիրառմանը:

✓ Նշում. 2016թ. հարցման արդյունքներով ևս նշված որևէ ֆունկցիա չի արժանացել հարցվածների ավելի քան 50 տոկոսի աջակցությանը, և նորից հարկային գործի հետ առավել առնչություն ունեցող է համարվել

հաշվապահական հաշվառման ծրագրերի կիրառման նկատմամբ վերահսկողությունը:


Գծապատկեր 43. ՀՀ ՊԵԿ-ի կողմից հետևյալ ծառայությունների մատուցումը որքանո՞վ է նպաստում ՊԵԿ-ի հիմնական վարչարարական գործառույթի իրականացմանը

	■ Լիովին նպաստում է		■ Լպաստում է		■ Ազդեցություն չունի		
	■ Հի նպաստում	■ ԳՊ	■ Բոլորովին չի նպաստում	■ ԳԳ	■ ԳՊ	■ ԳԳ	
2018	Արժույթային կարգավորման օրենքի դրույթների վերահսկողությունը	3.5	33.8	24.3	10	2	27.3
	Հաշվապահական հաշվառման ծրագրերի կիրառումը	7.0	42.0	24.8	8	1	17.5
	Կանխիկ գործարքների սահմանաչափերի կիրառումը	3.3	35.8	25.5	15	2	19.5
	Հարկային հանցագործությունների գծով հետաքննության ու նախաքննության իրականացումը	3.0	39.0	18.8	4		35.3
	Առանց պետական գրանցման և/կամ առանց լիցենզիայի (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու...	4.5	45.0	18.3	40		27.5
2016	Արժույթային կարգավորման օրենքի դրույթների վերահսկողությունը	16.2	16.2	18.3	6	8	34.8
	Հաշվապահական հաշվառման ծրագրերի կիրառումը	23.6	20.2	18.8	4	3	30.4
	Կանխիկ գործարքների սահմանաչափերի կիրառումը	14.1	16.8	21.2	5	6	37.2
	Հարկային հանցագործությունների գծով հետաքննության ու նախաքննության իրականացումը	12.8	12.3	18.8	5	8	42.9
	Առանց պետական գրանցման և/կամ առանց լիցենզիայի (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու...	17.5	15.7	22.8	2	4	37.2
2013	Արժույթային կարգավորման օրենքի դրույթների վերահսկողությունը	9.3	16.8	15.5	11	16	30.8
	Հաշվապահական հաշվառման ծրագրերի կիրառումը	10.3	24.3	19.3	6	10	29.5
	Կանխիկ գործարքների սահմանաչափերի կիրառումը	5.0	18.5	21.5	9	13	31.8
	Հարկային հանցագործությունների գծով հետաքննության ու նախաքննության իրականացումը	8.3	17.5	21.5	11	11	29.8
	Առանց պետական գրանցման և/կամ առանց լիցենզիայի (ապօրինի) ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու...	12.5	24.3	18.5	9	10	25.5


Ամփոփելով կարելի է ասել, որ գործարար հարկ վճարողները չեն խորանում հարկային մարմնի գործառույթների մեջ, և ձևավորված հարացույցը փոխելու հանրային-գործարար պահանջ դեռևս ձևավորված չէ:

Հարկային մարմնի ծառայությունների առումով գործարարները չեն տեսնում նոր ծառայությունների պահանջ, բացի նոր ժամանակակից տեխնոլոգիական գործիքների կիրարկման, դրա փոխարեն ակնկալելով հարկային մարմնից հարկ վճարողներին ուղարկվող տեղեկատվության օպերատիվության և որակի աճ (տես Գծապատկեր 44):

Գծապատկեր 44. Ձեր կարծիքով, ի՞նչ նոր ծառայություններ պետք է մատուցի ՊԵԿ-ը



Գծապատկեր 45. Ձեր կարծիքով, ի՞նչ նոր եղանակներով ու մեթոդներով պետք է ՊԵԿ-ը մատուցի ներկայումս մատուցվող ծառայությունները:



Գծապատկերների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.


- գործարար հարկ վճարողների 85,3 տոկոսը ակնկալում են նոր տեխնոլոգիական ծառայություններ, մասնավորապես հարկային հավելված հեռախոսների համար, պարզաբանումների պորտալի ստեղծում,
- 5,9 տոկոսը հակված են տեսնել ներքին աուդիտի և այլ կազմակերպական միջոցառումներ՝ «վերահսկողներին վերահսկելու» համար,

- 2,9 տոկոսը առաջարկում է նմանատիպ հարցումներ անցկացնել պարբերաբար,
- ներկայումս մատուցվող ծառայությունների բարելավման իմաստով գործարարներն ավելի ընդգծված հայտ են ներկայացրել (հարցվածների 58,5 տոկոսը) իրազեկման և խորհրդատվական աշխատանքների մասով: Զգալի են նաև տեխնիկական կատարելագործման՝ համակարգչային ծրագրերի, միասնական հաշվի կիրառման պահանջները (33,7 տոկոս):


ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻ ՎՐԱ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հարկային ստուգումների հարցում գործարարները չեն նշել իրենց համար որևէ անակնկալի մասին (Գծապատկերներ 46-49):


Գծապատկեր 46. Ասացե՛ք խնդրեմ, 2017-2018 թթ. Ձեր կազմակերպությունում/բիզնեսում իրականացվե՞լ է որևէ հարկային ստուգում (ուսումնասիրություն)




Գծապատկեր 47. Ի՞նչ հարկային ստուգում (ուսումնասիրություն, չափազրում) է իրականացվել Ձեր կազմակերպությունում/բիզնեսում 2017-2018թթ.



Գծապատկեր 48. Արդյո՞ք այդ (համալիր հարկային ստուգման) ստուգումը հարկային մարմնի կողմից հաստատված տարեկան պլանի շրջանակում էր



Գծապատկեր 49. Ի՞նչ հիմքով է իրականացվել այդ պլանից դուրս ստուգումը:




Ստացվում է հետևյալ պատկերը.


- Հարկային ստուգումների հետ առնչվել են միայն հարցված գործարար հարկ վճարողների 38 տոկոսը:
- Ստուգումների մեծ մասը՝ 67 տոկոս, եղել են համալիր ստուգումներ (83 տոկոսը՝ պլանային) և մի մասը՝ ասահ վերադարձի ստուգում (27 տոկոս):
- Այլ տեսակի հարկային ստուգումների մեջ գերակայել է ՀԴՄ ստուգումը (42,8 տոկոս):
- Հարկ վճարողները լավատեղյակ չեն պլանային չհամարվող ստուգումների իրավական հիմքերի մասին կամ չգիտեն կամ չեն կարողացել իդենտիֆիկացնել դրանց հիմքերը հանձնարարագրերում (իրականում 40 տոկոսը նշել են, որ հանձնարարագրում հիմքերը նշված չեն եղել):

Հարկային ստուգումների ժամանակ իրենց իրավունքների մասին տեղյակ են գործարար հարկ վճարողների մեծ մասը՝ 73,3 տոկոս (Գծապատկերներ 50, 51):

Գծապատկեր 50. Ի՞նչ չափով եք տեղեկացված Ձեր իրավունքների մասին՝ կապված հարկային ստուգումների (ուսումնասիրությունների, չափագրումների) հետ



Գծապատկեր 51. Ի՞նչ չափով եք կարողանում իրացնել Ձեր՝ հարկային ստուգումների հետ կապված իրավունքները




Վերը բերված Գծապատկերների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

- Հարցվածների միայն 4 տոկոսն են «անկեղծորեն» խոստովանել, որ տեղեկացված չեն իրենց իրավունքների մասին:
- Իրենց ամբողջովին «ուժեղ»՝ տեղեկացված են հայտարարել գործարար հարկ վճարողների 33 տոկոսը:


- Հարցված գործարար հարկ վճարողների 43 տոկոսը հայտարարել են, որ կարողանում են հետամուտ լինել իրենց իրավունքների իրացմանը:

Հարկային ստուգումների առավել բացասական կողմը գործընթացի ժամանակատարությունն է, իսկ սպեղանին (դրական կողմը)՝ սեփական սխալների ուղղելու հնարավորությունը (տես աղյուսակներ 22.59, 22.60) և Գծապատկերներ 52, 53:

Գծապատկեր 52. Նշվածներից որո՞նք են Ձեր բիզնեսի համար հարկային ստուգումների բացասական կողմերը:



Գծապատկեր 53. Նշվածներից որո՞նք են Ձեր բիզնեսի համար հարկային ստուգումների դրական կողմերը




Վերը բերված գծապատկերների վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.


- գործարար հարկ վճարողների 35,1 տոկոսը բացասական են համարում այն, որ հարկային ստուգումները երկար և ժամանակատար են:
- առավել դրական կողմ է համարվել «սեփական սխալներ տեսնելը և ուղղելը»: Ստացվում է, որ փաստորեն հարկ վճարողները այդ պահին չեն հիշում, որ այդպիսի «աուդիտի» համար վճարում են նաև հարկային օրենսդրությամբ սահմանված տույժեր և տուգանքներ և փաստորեն շարունակում են միայն սահմանափակ դեպքերում դիմել արտաքին հարկային խորհրդատուի օժանդակությանը:

Հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ անհամաձայնություն արտահայտողները մեծաթիվ չեն (տես Գծապատկերներ 54, 55) :

Գծապատկեր 54. Երբևէ արտահայտել է՞ ձեր անհամաձայնությունը հարկային ստուգումների արդյունքների վերաբերյալ




Գծապատկեր 55. Հարկային ստուգումների արդյունքների հետ անհամաձայնության դեպքերում ի՞նչ քայլերի եք դիմել



Ստուգումների ժամանակ անհամաձայնություն արտահայտել են գործարար հարկ վճարողների միայն 23,5 տոկոսը: Նրանց քայլերը շատ ակտիվ չեն եղել, այսպես, նրանցից՝ քայլեր ձեռնարկել է 58,5 տոկոսը և հիմնական ձեռնարկված քայլը եղել է տարաձայնությունների ներկայացումը: Ավելի քիչ թվով գործարարների դիմել են հարկային մարմնի գերատեսչական գանգատարկման հանձնաժողովին՝ 35,1 տոկոս: **Դատարան գնացել է գործարարների միայն 18,1 տոկոսը:** Այնուամենայնիվ գործարարները չեն համակերպվել ամբողջապես և նրանց 63,8 տոկոսը իրենց դժգոհությունն են արտահայտել (պետք է ենթադրել նաև ընդհանուր գծերով քննարկել) ընկերական միջավայրում:

Ստուգման ակտի բողոքարկման արդյունքներից շարունակում են մնալ ավելի մեծ սպասելիքներ (տես Գծապատկեր 56):

Գծապատկեր 56. Ասացեք խնդրեմ, թե որքանով եք բավարարված եղել ստուգման արդյունքներից հետևյալի առնչությամբ՝ օգտագործեք 1-5 սանդղակը, որտեղ 1-ը նշանակում է «Բոլորովին բավարարված չեմ եղել» և 5-ը՝ «Լիովին բավարարված եմ եղել»




Հարկային ստուգման արդյունքների վերաբերյալ անհամաձայնություն հայտնած գործարար հարկ վճարողները որոշակի (35,1 տոկոս) բավարարվածության ընկալում ունեն միայն ստուգման ակտի նախագծի քննարկման փուլից (վերը նշված տարաձայնությունների՝ ներկայացումն է): Գերատեսչական (խոսքը ՀՀ ՊԵԿ գանգատարկման հանձնաժողովն է) փուլից բավարարված են 21,3 տոկոսը:


Ռատական փուլից բավարարված են գործարարների միայն 5,3 տոկոսը: Պետք է հաշվի առնել, որ այս պարագայում առկա է ելակետային տեղեկատվության բնական ասիմետրիա, այսինքն պարտադիր չէ, որ նույն գործարարները անցած լինեն բողոքների քննարկման բոլոր երեք փուլերով: Մասնավորապես դատարանների դեպքում հարցված գործարարների 79,8 տոկոսը ընդհանրապես նրանց հետ գործ չեն ունեցել:

Ռիսկայնության ցուցանիշների հիման վրա ստուգումների ու ուսումնասիրությունների իրականացումն արդեն ընդունելի կոնցեպցիա է հարկ վճարողների մոտ (Գծապատկերներ 57, 58):

Գծապատկեր 57. Տեղյակ եք արդյո՞ք, որ ըստ օրենսդրության, հարկային ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են ՊԵԿ ներսում համակարգչային ծրագրի միջոցով ռիսկայնության ցուցանիշների գնահատման հիման վրա .



Գծապատկեր 58. Արդյոք համամի՞տ էք, որ համակարգչային ծրագրի միջոցով ռիսկայնության ցուցանիշների գնահատման գործառույթը իրականացվում է արդարացիորեն և անկանխակալ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով և հատուկ սահմանված մեթոդաբանությամբ




Գծապատկերների վերլուծությունից ստացվում է հետևյալը.


- տեղեկացվածությունը բարձր է (հարցվածների 75,5 տոկոսը) այն մասին, որ Հայաստանում գործում է օրենք, համաձայն որի հարկային ստուգումներն ու ուսումնասիրություններն իրականացվում են ՊԵԿ ներսում համակարգչային ծրագրով ռիսկայնության ցուցանիշների գնահատման հիման վրա:
- հարցման արդյունքները ցույց են տալիս, որ գործարարները հավատում են, որ վերը նշված գնահատումներն իրականացվում են անկողմնակալ և արդարացիորեն: Արհեստական ինտելեկտի, տվյալների մեքենայական մշակման գործոնի ազդեցությունն ակնհայտ է:

Մոնիթորինգի կենտրոնի բացահայտվող և գործարարներին ուղարկվող՝ ռիսկերի վերաբերյալ ծանուցումների ինստիտուտը կայացման փուլում է, որոշ դեպքերում դեռևս «գերազնահատում է» իրական հատվածի ռիսկերը, սակայն ընդհանուր առմամբ ողջունվում է (Գծապատկերներ 59-61):


Գծապատկեր 59. ՀՀ ՊԵԿ Մոնիտորինգի կենտրոնից ստացել էք արդյո՞ք ծանուցում այն մասին, որ Ձեր (հարկ վճարողի) վարքագիծը պարունակում է ՀԴՄ-ներով և (կամ) հաշվարկային փաստաթղթերով կատարված գործարքների ռիսկ



Գծապատկեր 60. Ընդունել է՞ք (համաձայնել է՞ք) այդ գործարքների վերաբերյալ ծանուցմամբ բացահայտված ռիսկերի ճշմարտացիությունը



Գծապատկեր 61. Կցանկանայի՞ք արդյո՞ք ՀՀ ՊԵԿ-ից ստանալ ծանուցումներ, որոնք կբացահայտեն Ձեր գործունեությանն առնչվող ռիսկերը՝ հնարավորություն ընձեռելով աշխատանքային կարգով վերացնել դրանց առաջացման պատճառները




Գծապատկերներնում բերված տվյալների վերլուծությունից ստացվում է հետևյալը.

- գործարարների 22,8 տոկոսի մոտ մոնիթորինգով դուրս են բերվել հարկային խախտումներ իրականացրած լինելու ռիսկերի հայտանիշեր:
- մտահոգող բարձր ցուցանիշ է կազմում՝ այդ ռիսկայնության հայտանիշներ պարունակելու վերաբերյալ հարկային մարմնի ծանուցումների հետ անհամաձայնության բաժինը՝ 60,5 տոկոս:
- Չնայած վերը նշվածին, այնուամենայնիվ Ծանուցումների ինստիտուտի հարցում գործարարների մոտ առկա է համագործակցելու բարձր պատրաստակամություն. գործարարների 77 տոկոսը ցանկանում է ստանալ այնպիսի ծանուցումներ, որոնք կբացահայտեն իրենց գործունեության ռիսկերը:

Կամերալ ուսումնասիրությունների արձանագրություններում բերված վերլուծությունները արդեն իրենց կայուն և գնահատվող տեղն են գտել հարկային վարչարարներ-գործարար հարկ վճարողներ հարթակում (Գծապատկեր 62):

Գծապատկեր 62. Հիմնվելով Ձեր և Ձեր գործընկերների փորձի վրա, որքանո՞վ եք համամիտ հարկային մարմնի կողմից կամերալ ուսումնասիրությունների արձանագրությունները հարկատուին ներկայացնելու առնչությամբ հետևյալ տեսակետների հետ




Գծապատկերի վերլուծությունից ստացվում է հետևյալը.

- հարցված գործարարների 65,8 տոկոսը իրենց ստացած՝ կամերալ արձանագրությունների մեջ բերված վերլուծություններում ներկայացված փաստերի, դրանց դրույթների առնվազն կեսը համարում է տեղին;
- գործարարները համարում են, որ վերջին երկու տարում իրենց ստացած կամերալ վերլուծությունների որակն աճել է;
- գործարարները համաձայն են, որ հարկային մարմնում այդպիսի վերլուծություններ իրականացնողները կարդում են ու հաշվի են առնում՝ հարկատուների պատասխան փաստարկները: Այդպես է կարծում գործարարների 73 տոկոսը:

Հարկերի հավաքագրման գործառնությունների կապակցությամբ գործարար հարկ վճարողները դեռևս միայն կիսով չափ են վստահ, որ հարկային մարմինը արդար ու հավասար վերաբերումք է կիրառում բոլորի նկատմամբ (Գծապատկեր 63):

Գծապատկեր 63. Որքանո՞վ էք համամիտ հետևյալ տեսակետի հետ, կապված հարկերի վճարումն ուղացնելու պարագայում գումարների հավաքագրման հարկային ներգործության գործառույթների հետ. «Հարկային պարտավորությունների գումարների գանձման, արգելանքի կիրառման և հարկադիր գանձման աշխատանքները հստակ են, արդար են ու բոլորի նկատմամբ հավասարապես են կիրառվում».



Գծապատկերի վերլուծությունից ստացվում է հետևյալը.

- հարցված գործարարների 30 տոկոսը չգիտի, չի կարողանում գնահատել թե արդյոք հարկային պարտավորությունների գումարների գանձման, արգելանքի կիրառման և հարկադիր գանձման աշխատանքները հստակ են, արդար են ու բոլորի նկատմամբ հավասարապես են կիրառվում:

- գործարարների միայն 47 տոկոսն է կարծում, որ նշված խումբ հարկային վարչարարական գործառույթները արդար ու հավասար են կիրառվում: 23,3 տոկոսը ուղղակիորեն պատասխանում են, որ այդպես չեն կարծում:


- ✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել, որ մարզերում միջին 47 տոկոսի դիմաց «արդար ու հավասար» ընկալողների տեսակարար կշիռը ցածր է ու կազմում է 41 տոկոս (Հ4.28.):

- Այս խումբ գործառույթը՝ սույն վերլուծականում բերված՝ հարկային վարչարարական մյուս բոլոր գործառույթների համեմատ առավել ցածր գնահատական ունի, այլ կերպ ասած՝ բարելավման ռեզերվ ունի: Դա կարևոր է, քանի որ այս գործառույթն առավել կարևորն է, իսկ մնացած բոլորը՝ սրա նկատմամբ «սպասարկող» բնույթ ունեն: Տեղին կլինի այս գծով հարկային մարմնի գործառույթները ու ներկայացումը լինեն ավելի թափանցիկ:

ԲԻԶՆԵՍՈՒՄ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Գործարար հարկ վճարողները դեռևս էականորեն հակված են հաշվապահական հաշվառման ու ֆինանսական ու հարկային հաշվետվությունների պատրաստման գործառույթը չպատվիրակել արտաքին կատարողների (Գծապատկեր 64):

Գծապատկեր 64. Ո՞վ է իրականացնում կազմակերպության առօրյա հաշվապահությունը և ֆինանսական ու հարկային հաշվետվությունների պատրաստումը




Գծապատկերի վերլուծությունից ստացվում է հետևյալը.

- հարցված գործարարների միայն 18 տոկոսն է, որ կազմակերպության առօրյա հաշվապահությունը և ֆինանսական ու հարկային հաշվետվությունների պատրաստումը վստահում է, փոխանցում է արտաքին կատարողների (outsourcing):
- կազմակերպությունների 84,9 տոկոսը (տես աղյուսակ 24.29.) բավարարվում են 1 կամ 2 հաշվապահներով:
- Գործարար հարկ վճարողների 10 տոկոսը հենց անձամբ են վարում հաշվապահական-հարկային գործերը:
- ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների համեմատ, հինգ տարում չի արձանագրվում հաշվապահության վարման կառուցվածքի էական փոփոխություն: Մասնավորապես «հաշվապահությունը պատվիրակված է» հարցին դրական պատասխանողների տեսակարար կշիռը եղել է, համապատասխանաբար 16,3 տոկոս, 13,4 տոկոս և 17,8 տոկոս:
- ✓ Նշում. հարցման արդյունքների խաչաձև համադրումը թույլ է տալիս արձանագրել(տես աղյուսակ 24.29. և 24.30.), որ.
 - Մարզերում պակաս են հակված հաշվապահական հաշվառումը պատվիրակել արտաքին կազմակերպության. 14 տոկոս՝ միջին 18 տոկոսի դիմաց:
 - «Երիտասարդ գործարար միավորները (6 տարուց պակաս փաստացի (ակտիվ) գործող բիզնեսները)», ընդհակառակը, միջինից բարձր են դիմում այդ քայլին՝ 21,7 տոկոս միջին 18 տոկոսի դիմաց:

Խորհրդատվական ծառայություններից օգտվելը նորմա չէ. մեծ մասը ունիվերսալ են և գիտեն՝ ինչպես անել ամեն ինչ (տես Գծապատկեր 65):

Գծապատկեր 65. Արդյոք օգտվու՞մ էք այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող հետևյալ վճարովի խորհրդատվական ծառայություններից




Գծապատկերի տվյալներից ստացվում է հետևյալը.

- Արտաքին խորհրդատուի ծառայություններից օգտվելը տարածված չէ, իսկ եղածների մեջ առավել պահանջարկվածը գործարարների մոտ (10 տոկոս) իրավաբաններն են:
- Հարկային հարցերով խորհրդատուների օժանդակությանն են դիմում հարցված գործարարների միայն 8 տոկոսը:
- Հաշվապահական մասնագիտության գծով նշված 25 տոկոսի՝ համեմատաբար մեծ լինելը պետք է պայմանավորել արտաքին կատարողներին հաշվապահության վարումը հանձնարարելու գործոնի հետ:
- Բիզնես խորհրդատվության համար արտաքին մասնագետի դիմում են գործարարների միայն 4 տոկոսը, որը շատ ցածր ցուցանիշ է: Պետք է նշել, որ այդպիսի վերաբերմունքի նաև մեկ այլ անուղղակի ապացույց է այն (տես Գծապատկեր 68), որ գործարարների 80,8 տոկոսը զրո դրամ են ծախսում վերապատրաստումների վրա:
 - ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների հետ համեմատումը ցույց է տալիս (տես աղյուսակ 23.7) էական աճ միայն իրավաբան խորհրդատուների հարցում:

Հաշվապահության վարման ու հարկերի հաշվարկման ու վճարման գործառույթների ուղղությամբ ծախսերի հատուկ հաշվառում գործարարները չեն պահում (տես Գծապատկեր 66):

Գծապատկեր 66. Մոտավոր հաշվարկներով, տարեկան որքա՞ն գումար էք ծախսում հաշվապահական հաշվառում վարելու, ֆինանսական և հարկային հաշվետվություններ պատրաստելու վրա




Գծապատկերի վերլուծությունից ստացվում է, որ.

- Գործարարների 19,3 տոկոսը հակված չեն եղել կամ չեն կարողացել պատասխանել այդ հարցին:
- Գործարարների 42,3 տոկոսը այդ գործառնության համար տարեկան ծախսել է մինչև մեկ մլն դրամ: Դա կոռելացվում է հարցման այն տեղեկատվության հետ, որ.
 - Կազմակերպությունների 84,9 տոկոսը բավարարվում է 1-2 հաշվապահով:
 - Գործարար հարկ վճարողների 10,1 տոկոսը հենց անձամբ են վարում հաշվապահական-հարկային գործերը:

Ապշեցուցիչ ցածր է հաշվապահական և հարկային թեմաներով վերապատրաստումների բյուջեն (տես Գծապատկեր 67):

Գծապատկեր 67. Մոտավոր հաշվարկներով, հաշվապահական ու հարկային թեմաներով վերապատրաստումների վրա տարեկան ինչքա՞ն գումար էք ծախսում




Գծապատկերի վերլուծությունից ստացվում է, որ.


- Գործարարների 80,8 տոկոսը հարկային և հաշվապահական թեմաներով վերապատրաստումների համար որևէ գումար չեն հատկացնում:
- Վերապատրաստումներից օգտվողները կազմել են հարցված գործարարների 14,9 տոկոսը, ընդ որում նրանց 90 տոկոսը այդ նպատակով տարեկան ծախսում է ոչ ավելի, քան 300 հազար դրամ:
- ✓ Նշում. 2013թ. և 2016թ. իրականացված հարցումների արդյունքների հետ համեմատումը (տես աղյուսակ Հ3.8) այս հարցում տեղաշարժեր չարձանագրեց տարիների ընթացքում:

Զարմանալի լավատեսական են եղել գործարարների՝ ընթացիկ տարվա և հետագա երեք տարիների ֆինանսական արդյունքների սպասվելիք և կանխատեսվող ցուցանիշները (տես Գծապատկերներ 68, 69):

Գծապատկեր 68. Ինչպե՞ս կբնութագրեիք Ձեր ընկերության/բիզնեսի ֆինանսական գործունեությունը ընթացիկ տարում



Գծապատկեր 69. Ինչպե՞ս կնկարագրեիք Ձեր կազմակերպության/բիզնեսի հեռանկարներն այս (2018թ.) և առաջիկա երկու (2019-2020թթ.) տարիների ընթացքում



Աղյուսակների և Գծապատկերների վերլուծությունից ստացվում է, որ.

- Գործարարների 7,6 տոկոսն է միայն, որ կորուստներ են պլանավորում ընթացիկ տարում՝ «տրտնջացողները» քիչ են:

- Մոտակա երեք տարիներին կանխատեսվող ֆինանսական-գործարար հեռանկարները դրական են գնահատել հարցված գործարարների 74,9 տոկոսը:

- Նման լավատեսությունը կարևոր գործոն է, բարերար՝ ստեղծագործ մոտեցումների համար: Միաժամանակ ցանկալի է և կարևոր կլինի, որ այն հիմնված լինի տեղեկացվածության վրա, այլ ոչ թե ժամանակի որոշակի հատվածում ժողովրդական պաթոսի վրա: Տեղին է նկատել սույն Վերլուծական զեկույցի նախորդող հատվածներում բերված այլ տեղեկատվության հետ որոշակի անհամապատասխանությունը. գործարարները հակված չեն աշխատել արտաքին խորհրդատուների հետ և վերապատրաստումների բյուջեն մեծ մասի մոտ զրո դրամ է: Կարևոր կլինի նաև, որ գործարարները լավատեղյակ լինեն Հայաստանում և ռեգիոնում առկա մարտահրավերների մասին (հարկային վարչարարական գործառնությունների հետ ուղղակի կապ չունի) և իրենց հաշվարկները կատարեն և որոշումները կայացնեն առավել իրազեկված լինելու պայմաններում և առարկայական վերլուծություններից հետո միայն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հարցումը ցույց տվեց, որ հարկային վարչարարության հարցում պետական կառույցն ունի սպառողների կողմից գնահատման էական առաջընթաց, ինչպես սպասարկման, այնպես էլ էլեկտրոնային ծառայությունների և կամերալ ուսումնասիրությունների հարցում: Զարգանում է ՊԵԿ-ի ուսումնական կենտրոնը:

Հարկային մարմինն ունի նաև մի քանի ոլորտներ, որտեղ խնդիրներ կան և որտեղ ցուցանիշները պետք է բարելավվեն, մասնավորապես՝ միասնական հաշվի գործառույթը, հեռախոսազանգերի կենտրոնը, բողոքարկման համակարգը, հարկերի հավաքագրման հարցում հավասար ազդեցության ապահովումը, ժամանակակից տեխնոլոգիական գործիքների առաջարկումը հարկ վճարողներին:

Նշված խնդիրների լուծման նպատակով առաջարկվում է իրականացնել մի քանի միջոցառումներ: Դրանք հիմնականում ուղղված են հարկ վճարողներին սպասարկման ծառայությունների ընդլայնմանը կամ եղածների բարելավմանը:

1. Ընդլայնել հարկ վճարողներին սպասարկման ծառայությունները իրազեկման ուղղությամբ: Հատկապես ուշադրություն դարձնել օրենսդրական փոփոխությունների մասին արագ տեղեկացնելուն:
2. Հարկ վճարողների մոտ խորհրդատվական ծառայությունների համար միջոցներ հատկացնելու տղության պարագայում տեղին կլինի գործարկել հարկ վճարողների հարցումների պատասխանների խմբավորման և հատուկ պորտալի վարումը:
3. Էականորեն բարելավել, աջակցել հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը, սահմանելով կատարողականության բարելավման ցուցանիշներ:
4. Ներդնել հարկային սպասարկման գործընթացների գնահատում և արդյունավետության բարձրացման պլանավորում: Պարբերաբար հանրությանը տեղյակ պահել սպասարկման ծառայությունների հարցում առաջընթացի վերաբերյալ, կոնկրետ տեխնիկական ցուցանիշների ներկայացմամբ:
5. Տարեկան պարբերականությամբ անցկացնել հարցում հարկ վճարողների շրջանում, այդ հիմնական ցուցանիշների ընթացքը վերագնահատելու համար: Հարցաշարի հարցերը ներկայացվում են որպես սույն Հաշվետվության հավելված:
6. Մեկանգամյա հարցում իրականացնել հարկ վճարողների շրջանում՝ էլեկտրոնային ծառայությունների տեխնիկական հարցերի շուրջ: Հարցման մի շարք մասնակիցներ լրացուցիչ նշել են այդպիսի խնդիրների մասին: Արդյունքում կարող է նաև պլանավորվել հարկային հեռախոսային հավելվածի ստեղծումը:
7. Կարգավորել միասնական հաշվի խնդիրները, այն նոր ծառայությունների հարցում առավել խնդրահարույցն է համարվել:
8. Անդրադառնալ «օրինապահ հարկ վճարող» ինստիտուտին, այդ տեսքով դրա հետագա կիրառման նպատակահարմարության հարցին:
9. Լրացուցիչ պարզաբանումների կարիք ունի էլեկտրոնային եղանակով հարկերը վճարելու ծառայությունը: Նպատակահարմար է դա իրականացնել համակարգված մի պարզաբանման միջոցով:

10. Նախապատրաստական միջոցառումներ իրականացնել հորիզոնական մոնիթորինգի համակարգի ներդրմանն ընդառաջ. հարկ վճարողները դրա մասին բավարար տեղյակ չեն:
11. Աշխատանք տանել հաշվապահական մեծ ընկերությունների հետ, առանձին ծրագրով, պետություն-մասնավոր ծրագրի իրականացման համար, իրազեկման և այլ սպասարկման աշխատանքների հարցում:
12. Աշխատանք տանել կորպորատիվ կառավարման հարցերով զբաղվող ոչ առևտրային կառույցների հետ՝ գնահատելու համար համագործակցության հնարավորությունները՝ հարկերի վճարման հարցը կորպորացիաների բաժնետերերի և խորհուրդների աշխատանքների օրակարգերում ներառելու համար:

Հավելված 1. Հարկային վարչարարություն և հարկային ընկալումների մասին հարկատուների կարծիքի ուսումնասիրության հարցաթերթը



**Հարկային վարչարարություն և հարկային ընկալումներ.
հարկատու կազմակերպությունների և
անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտություն
Սեպտեմբեր, 2018թ.**

ԸՄ ՆՀ	_____
-------	-------

Մարզ	
Քաղաք/գյուղ	

Հարցազրուցավարի ՆՀ	
-----------------------	--

Բարև ձեզ, իմ անունը [նշեք ձեր անունը, ազգանունը] է: Ես տվյալներ եմ հավաքագրում Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամի կողմից իրականացվող հետազոտության համար: Նախագծի նպատակն է գնահատել Հայաստանում բիզնեսի վերաբերմունքը հարկային վարչարարության նկատմամբ: Հարցումը հաջորդում է 2013 և 2016 թվականներին իրականացված հետազոտություններին և նպատակ ունի ստանալ նոր տվյալներ:

Ձեր կազմակերպությունը, ի թիվս 400 այլ կազմակերպությունների, պատահականորեն ընտրվել է բոլոր գրանցված հարկատուների ընդհանուր ցանկից՝ ձևավորելով ներկայացուցչական ընտրանք: ՀՌԿԿ-Հայաստանի անունից վստահեցնում եմ, որ Ձեր տրամադրած տեղեկությունները գաղտնի կմնան և կօգտագործվեն միայն ամփոփ տեսքով և միայն հետազոտական նպատակներով:

Օր/ամիս/տարի	____/____/____
--------------	----------------

Հարցազրույցի սկիզբը: [9/4.09.2018 24-ԺԱՄՅԱ
ՌԵԺԻՍԸ]

Ժամ
|_|_| | |_|_| Բոպե

ԲԱԺԻՆ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՄԱՍԻՆ

1.1. (2016-1.1) Ո՞րն է Ձեր պաշտոնն այս կառույցում:

Բաժնետեր/Սեփականատեր	1
Գործադիր տնօրեն	2
Խորհրդի անդամ (այդ թվում խորհրդի նախագահ կամ խորհրդի արտաքին անկախ անդամ)	3
Ֆինանսական հարցերով ղեկավար	4
Գլխավոր հաշվապահ	5
Իրավաբանական ծառայության ղեկավար	6
Կադրերի/Մարդկային ռեսուրսների բաժնի պետ	7
Ես անհատ ձեռնարկատեր եմ	8
Այլ (նշել_____)	9

1.2. (2016-1.2) Ձեր բիզնեսը/կազմակերպությունը քանի՞ տարի է փաստացի (ակտիվ) գործում Հայաստանում:

Մինչև 1 տարի	1
1 – 3 տարի	2
4 – 6 տարի	3
7 – 10 տարի	4
11 – 15 տարի	5
15 տարուց ավելի	6
ՉԳ/ՀՊ	-1/-2

1.3. (2016-1.3) Ո՞րն է Ձեր բիզնեսի կազմակերպաիրավական կարգավիճակը/ձևը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	1
Փակ բաժնետիրական ընկերություն	2
Բաց բաժնետիրական ընկերություն	3
Արտադրական կոոպերատիվ	4
Ես անհատ ձեռնարկատեր եմ	5
Այլ (նշել_____)	6

1.4. (2016-1.4) Ո՞վ է Ձեր բիզնեսի ամենամեծ բաժնետերը/մասնակիցը:

Ֆիզիկական անձ Հայաստանից	1
Ֆիզիկական անձ արտերկրից	2
Տեղական ինքնակառավարման մարմին	3
Հայաստանյան մեկ այլ կազմակերպություն	4
Օտարերկրյա կազմակերպություն	5
Պետությունը	6
Ես անհատ ձեռնարկատեր եմ	7

Այլ (նշել _____)	8
	ՉԳ/ՀՊ -1/-2

1.5. (2016-1.5) Ո՞րն է Ձեր գործունեության հիմնական ոլորտը: [Զ/Վ. Ընդունել մեկ պատասխան:]

Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1
Հանքագործական արդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2
Մշակող արդյունաբերություն	3
Էլեկտրականության, գազի, գոյորշու և լավորակ օդի մատակարարում	4
Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	5
Շինարարություն	6
Մեծածախ և մանրածախ առևտուր, ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգում	7
Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	8
Կացության և հանրային սննդի կազմակերպում	9
Տեղեկատվություն և կապ	10
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն	11
Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	12
Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	13
Վարչարարական և օժանդակ գործունեություն	14
Պետական կառավարում և պաշտպանություն, պարտադիր սոցիալական ապահովություն	15
Կրթություն	16
Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում	17
Մշակույթ, զվարճություններ և հանգիստ	18
Սպասարկման այլ ծառայություններ	19
Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու. տնային տնտեսություններում չտարբերակված ապրանքների և ծառայությունների արտադրություն սեփական սպառման համար	20
Միջազգային կազմակերպություններ	21
Այլ (նշել) _____	22

1.6. (2016-1.6) Արդյո՞ք Ձեր կազմակերպությունում գործարկված է կորպորատիվ կառավարման համակարգը (լիազորությունների բաշխում բաժնետերերի, տնօրենների խորհրդի, գործադիր տնօրենի ու հանձնաժողովների միջև, ներքին աուդիտի գործառույթ և այլն):

Այո	1
Ոչ	0
Չգիտեմ, թե դա ինչ է	2
	ՉԳ/ՀՊ -1 / -2

1.7. (2016-1.7) Արդյո՞ք Ձեր կազմակերպության գործադիր տնօրենը միաժամանակ հիմնական բաժնետերերից/ մասնակիցներից է:

Այո	1
Ոչ	0
	ՉԳ/ՀՊ -1/-2

1.8. (2016-4.11) Ձեր կազմակերպությունում ո՞ր մարմինն է որոշումներ ընդունում հարկային հարցերում:

Մեծ բաժնետերը	1
Բաժնետերերը միասին	2
Տնօրենների խորհուրդը	3
Գործադիր տնօրենը	4
Այլ (նշել_____)	5
ԶԳ / ՀՊ	-1 / -2

1.9. (նոր հարց ՀՌԿԿ) Ձեր կազմակերպությունն ունի ՀՀ ՊԵԿ-ի կողմից շնորհվող «օրինապահ հարկ վճարող»-ի կարգավիճակ:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.10. (2016-2.1) Խնդրում եմ նշեք, թե հետևյալ հարկատեսակներից որն է վճարում Ձեր բիզնեսը: [Զ/Վ. Յուրաքանչյուր տողում մեկ պատասխան:]

Հարկատեսակ	ԱՅՈ	ՈՉ	ԶԳ/ ՀՊ
Շահութահարկ	1	0	-1/ -2
Ավելացված արժեքի հարկ	1	0	-1/ -2
Ակցիզային հարկ	1	0	-1/ -2
Եկամտային հարկ (ներառյալ դրա հետ կապված սոցիալական վճարը)	1	0	-1/ -2
Գույքահարկ	1	0	-1/ -2
Հողի հարկ	1	0	-1/ -2
Շրջանառության հարկ	1	0	-1/ -2
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար	1	0	-1/ -2
Այլ վճարներ (նշել_____)	1	0	-1/ -2

1.11. (2016-6.1) Ձեր բիզնեսը զբաղվո՞ւմ է ապրանքների և/կամ ծառայությունների ներմուծման և/կամ արտահանման գործունեությամբ:

Ներմուծում	1
Արտահանում	2
Երկուսն էլ	3
Ոչ մեկը	4
ԶԳ/ՀՊ	-1/-2

1.12. (2016-1.8) Ձեր կազմակերպությունը հանդիսանում է արդյո՞ք որևէ միության, ասոցիացիայի անդամ:

Այո	1
Ոչ	0
ԶԳ/ՀՊ	-1/-2

ԲԱԺԻՆ 2. ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ

2.1. (2016-1.10) Ձեր կարծիքով, միություններն ու ասոցիացիաները կարողանո՞ւմ են նպաստել հարկային քաղաքականության ու հարկային վարչարարության բարելավմանը:

Լիովին	1
Ավելի շուտ, այո	2
Ավելի շուտ, ոչ	3
Բոլորովին ոչ	4
	ՉԳ/ՀՊ -1/-2

2.2. (նոր հարց ՀՌԿԿ) «Հարկ վճարող-հարկային մարմին» հաղորդակցության տեսանկյունից որքանո՞վ է օգտակար ՀՀ պետական եկամուտների կոմիտեի «Եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարակական խորհրդի» աշխատանքը:

Շատ օգտակար է	1
Օգտակար է	2
Որևէ ազդեցություն չունի	3
Օգտակար չէ	4
Բոլորովին օգտակար չէ	5
Չգիտեմ, թե դա ինչ է	6
	ՉԳ / ՀՊ -1 / -2

2.3. (նոր հարց ՊԵԿ) Ձեր գնահատմամբ, որքա՞ն է կազմում ամբողջ տնտեսական գործունեության ոլորտի (որով զբաղվում է նաև Ձեր կազմակերպությունը) իրական ստվերային /հարկային մարմիններին չհայտարարագրված/ շրջանառության %-ը:

	տոկոսը
	-1 / -2
	ՉԳ / ՀՊ

2.4. (2016-1.17) (Քարտ 2.3) Հարկային վարչարարության ո՞ր ուղղությունն էք համարում առանցքային գործարար միջավայրի բարելավման տեսանկյունից: [Չ/Վ. Ընդունեք մինչև երեք պատասխան, աջ սյունակում նշեք պատասխանի առաջին, երկրորդ և երրորդ տարբերակները:]

